

7366  
7367



2011

442002-7

639  
7-95

№ 1. «Դիլասնեսի» գրադարան  
Հրատարակութիւն 1. Սարգսեանի.

№ 1.

# ՊՏՂԱՏՈՒՄԱՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԼ

Ե Խ


ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՒԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ




Պատկերազարդ 41 նկարներով

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ ՊԱՐՏԻԶՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՒՆԻ Հ ՅԵՎՊԵԿ.



Ա. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Տիֆլ., типогр. „Гуттенбергъ“, уголъ Ольгинской и Слѣпцовской № 1.

ԹԻՖԼԻՍ

1910

ԳԻՒՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ  
ԱՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

16943

Eastwood

old reservoir. Camped upon a part  
of the river bank. The country east of the mountains

1936 May 17.

oppositifolia. (Chrysophy)

Phe (4<sup>o</sup>) Клопицида Phe  
на 2-го плющ. зуздове Продукт  
С2 Phe Phe



6427

36

*p b p o u s u y*

գողթան գԱԽԱՌԻ ՑՂՆԱ (ԶԱՆԱՆԱԲ) ԳԻՒԳԻ ԲՆԱԿԻՉ

## ԳԱՐԻՊ ՍԵՐԳՈՒԵԱՆԻ

Դաւիթ Սարգսեանը պատկանում է Գողթան գաւառի այն գիւղատնտես-սիրողների թվին, որոնք իշլենց ժամանակին՝ 1840-ական թւականներին միշտ զարք փորձերով նպստել են իրենց գաւառակում տարածերու գիւղատնտեսական կատարելագործութիւնները՝ բերել տալով պտղատու ծառերի ազնիւ տեսակներ, շերամի ընտափ սերմ և այլն, որով և շօշափելի օգուտ են տւել իրենց ծննդավայրին:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Այս գիրքը կազմելիս մենք օգտվել ենք Ա. Ս. Գրեբնիցկու „Մասնաւոր պատմություններից“ և այլ գրքից, որպէս և է. Շրայների, Մոկրժիցկու, Եաչևսկու, Բուցկու և այլ հեղինակների բազմաթիւ աշխատութիւններից, իսկ մեծ մասը՝ այն է միջատներին և սնկային հիւանդութիւններին վերաբերող զըլուխները, յատկապէս այս հրատարակութեան համար, սիրալիք կերպով յանձն առաւ կազմելու գիւղատրնտես Ս. Բաշինջաղեանը, որ 7—8 տարիներից ի վեր զբաղւած է մեր երկրի այգիներում և պարտէղներում տարածւած այգօրինակ վիասողների դէմ գործնական կոիւ մղելու գործով:

Աշքի առաջ ունենալով զրքիս գործնական նպատակները, մենք խոյս ենք աւել մի շարք աւելի երկրորդական հիւանդութիւնների և միջատների նկարագրութիւնից, որպէս և զրանց գէմ կուելու զանազան նոր միջոցների և գեղերի հետ ծանօթութիւն տալուց, քանի որ դրանք գործնական կեանքում գեռ ևս քիչ են փորձւած. իսկ այն անձանց, որոնք կրցանկան աւելի մանրամասն ծանօթութիւն ունենալ զրանց մասին, մենք տալիս ենք զրքիս վերջում ուստեղէն լեզով եղած այդօրինակ լաւագոյն աշխատութիւնների ցանկը: Գալով ծառերը բժշկելու համար հարկաւոր գեղերին, գործիքներին, մեքենաներին, զրանց մասին տեղեկութիւններ ընթերցողները կարող են գտնել զրքիս յայտարարութիւնների մէջ:

U P U A B U

Վնասակար միջատները և անկային հիւանդութիւնները այնքան մեծ վնասներ են հասցնում տարեց տարի մեր երկրի տնտեսութեան զանազան ճիւղերին՝ երկրագործութեանը, այգեգործութեանը, բանջարապահութեանը և անտառներին ու այնպիսի լուրջ խոչնդու են հանդիսանում զիւղատնտեսութեան յառաջադիմութեանը, որ ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ նրանց հետ ծանօթանալը և նրանց դէմ կռւելու միջոցներ գործադրելը պէտք է կազմի անհրաժեշտ և շատ կարևոր զիւղելիք հողի մարդկանց համար:

Բաւական է ասել, որ միայն մորեխը մի մեծ  
աղետ է մեր տնտեսութեան բոլոր ճիւղերի համար,  
որովհետև նա ոչնչացնում է թէ հացաբոյաբը, թէ  
բամբակը, բանջարանցները, բոստանները և թէ այլ  
գարնանային ցանքսերը. նոյնպէս սոսկալի կերպով վաս-  
սում է հացաբոյաբին հոտենառատեան մլուկը, հացի  
բղեղը և ուրիշները:

Խաղողի վազը ոչնչացնում է ֆիլոքսերան, շոշափելի վնասներ են տալիս վազին սնկային հիւանդութիւնները՝ «թող»-ը (Oidium Tuckeri) և միլդիուն (Perenospora viticola de Bary):

Фагофаги *Dematophora necatrix* (корней ая гниль, *ар-*

մատների վասումն), որը աւերումն է առաջ բերում թէ այդիներում և թէ մանաւանդ անկարանաներում (ՈՒՏՈՒՆԻԿԻ), նաև մի ուրիշ սունկ, գլխարկասունկը և այլն:

Յաճախ վասակար միջատները սոսկալի չափերով են աճում և այդ դէպքում մարդը իր թոյլ ջանքերով անզօր է լինում նրանց յաղթական շարժման առաջն առնել, որովհետեւ մեր տնտեսութեան յետամացութիւնը, նահապետական ձևերը, հողի վատ մըշակելը, կուլտուրաների միատեսակութիւնը և Մուղանի, Միլի, Գեենի անսահման անսապատները, որոնք գլխաւորապէս նպաստում են նրանց աճմանը, յանկարծ չեն կարող կերպարանափոխւել և ժամանակի ընթացքում միայն կարելի կլինի այդ վասաստու պայմանները վերացնել:

Բարեբաղտաբար մարդը այդ անհաւասար կըռւում մենակ չէ և ունի այնպիսի կարող դաշնակից, ինչպիսին է ինքը բնութիւնը, որը իր բազմաթիւ և բազմազան մակաբոյծերով (ուրացագ) ոչնչացնում է մեր թշնամիներին— վասակար միջատներին և այդպիսով վերջ դնում նրանց աւերումներին: Եւ դա հասկանալի է. բնութեան մէջ ոչ մի բան չի կարող անվերջ և անպատիժ աճել. երբ այս կամ այն վասակար միջատը զարգանում է, զուգընթացաբար աճում են և նրա պարագիտները, մինչև որ վերջնականապէս չոչնչացնեն նրան. բայց պարագիտները ոչնչացնելով միջատներին, միևնոյն ժամանակ ոչնչանում են և իւրանք, չգտնելով այլ ևս բաւականաչափ մնունդ իրանց համար. այդպիսով բնութեան մէջ հաստատում է հաւասարակշռութիւն, ներդաշնակութիւն ժամանակաւորապէս. բարեյաջող պայմաններում նորից միջատները

սկսում են աճել և նրանց հետ միասին պարագիտները, որոնք շարունակ կերպարւելով թէ միջատներով, թէ նրանց ձւաններով, նորից յաղթող են հանդիսանում: Պարագիտները մեծ նշանակութիւն ունեն մեր տնտեսութեան համար. բաւական է յիշատակել, որ 1901 թվան Ախալքալաքի գաւառում հոտենտոտեան մլուկի ձւանների 95% ոչնչացրին պարագիտները. կան մի շաբք պարագիտներ, որոնք ոչնչացնում են ահագին քանակութեամբ մորեխը և նրա ձւանները. այդիների վասակար միջատներն էլ ունեն իրենց բազմաթիւ պարագիտները, որոնք նոյնպիսի դեր են խաղում, ինչպէս և վերև յիշածները:

Առհասարակ պէտք է ասել, որ պարագիտները մեծ օգուտ են բերում մարդուն, ուստի և ամեն կերպ պէտք է խնամել նրանց և մեր կուի միջոցները՝ վասակար միջատների դէմպէտք է յարմարեցնել նրանց գործունէութեան հետ:

Այս գրքոյկի 71—76 երեսներում նկարագրւած են այգեգործի բարեկամ միջատները, թռչունները և կենդանիները. թէե թռչունները նոյնպէս օգուտ են բերում, բայց նրանց գերը շատ համեստ է և երբէք չի կարող համեմատել պարագիտների հսկայական գործունէութեան հետ:

Այգեգործին շատ աւելի հեշտ է կուել վասակար միջատների դէմ, քան թէ հողագործին, որովհետեւ առաջինը գործ ունի իր այգու սահմանափակ տարածութեան հետ, իսկ երկրորդը, իր ցանքսերը ազատելու համար, ստիպւած է կուել մղել վասակար միջատների դէմ լայնածաւալ անսապատներում: Այգեգործը պէտք է գիտենայ, որ իր թշնամիների դէմ կարող է յաջող կուել և ազատ պահել այդին նրան-

ցից, երբ նա իր ժամանակին միջոցներ ձեռք կառնի, այսինքն հէնց սկզբից դեղերը կանոնաւոր կը պատրաստի և իր այգին մաքուր կը պահի՝ թէ բօրդոյեան հեղուկը պատրաստելիս և թէ պարիզեան կանաչը գործադրելիս. աչքի առաջ ունենալով ուրիշների փորձերը, ամեն մի այգեգործ կարող է իր յատուկ փորձով փոփոխել նրանց կազմը, ինչպէս կը պահանջեն այդ տեղական պայմանները:

Այս գրքոյկը կարող է ծառայել մեր այգեգործներին իբրև համառօտ ձեռնարկ, որը ծանօթացնում է նրանց իր թշնամիների հետ և ցոյց է տալիս վնասակար միջատների դէմ կուելու միջոցները։ Այս տեսակ հրատարակութիւնների լոյս տեսնելը պէտք է ողջունել, որովհետև մեր այգեգործներին գալիս են ցոյց տալու միջոցներ՝ կուելու իրենց աշխատանքը ոչնչացնող մանր, բայց կարող թշնամիների դէմ և միւս կողմից ծանօթացնում են բարեկամ միջատների հետ, որոնց գործունեութիւնը այնքան մեծ օգուտ է բերում մարդուն։

### Ա. Սահակեան։

**ՊՃՂԱԾՈՒ ԺԱՄԹՔՅԻ ԽՆԱՄԹԻՌԻ  
ԹԻՒՆԵՐԻ ԵՒ ԴՐԱՆՑ ԲԺՇԿԵԼԻ**

Բոլորովին առողջ և տկար բոյսի կազմւածքի ձիշտ սահմանը դժւար է որոշել. ծառի որևէ մասի հիւածքի ամենափոքր վնասւածը, որ կարող է արգելել բոյսի կեանքի կանոնաւոր ընթացքը, առաջնում է հիւածնդութիւն։ Սննջան հիւածնդութիւնը մենք չենք նկատում, այլ նրան տեսնում ենք միայն այն ժամանակ, երբ հիւածնդութիւնը զարգանում է և հասնում ծայրայեղութեան ու նոր ենք միայն իմանում որ գործ ունենք հիւանդ կամ վնասւած բոյսի հետ, ուշը ենք դարձնում, վնասում դրա պատճառները և աշխատում ենք բժշկել հիւանդ ծառը։

Պտղատու ծառերի հիւածնդութիւնն ու վնասւելը առաջանում է մեծ մասամբ հետեւեալ գլխաւոր պատճառներինց—ա) կիմայի ու հողի անհամապատասխան լինելուց, բ) բազմաքիւ սունկերից, գ) զանազան միջատներից, դ) բոչուներից եւ ե) կրծող կենդանիներից։

Քննենք դրանցից ամեն մէկը ջոկ-ջոկ։

**1) ԱՆՀԱՄՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԼԻՄԱՆ ԵՒ ՀՈՂԸ։**

Պտղատու ծառերի այն բոլոր հիւածնդութիւնները, որոնք առաջանում են հողի եւ կիմայի անհամապատասխան լինելուց, կարելի է հեռացնել, երբ կը փոխենք բոյսի աճման պայմանները. իսկ եթէ դրանից

յետոյ էլ ծառը շարունակի վատ աճել—հիւանդանսալ, պէտք է նրան արմատից հանել ու տեղը դնել այն-պիսի ծառ, որ յարմարի տեղական բնական պայման-ներին և պահանջներին:

Անհամապատասխան կլիմայի պարզ նշանները հետևեալներն են. նախ՝ որ ծառերը չը դիմանալով ցրտին՝ սառչում են, երկրորդ՝ որ ամառը այնքան տաք չէ լինում որ պտուղները համանեն: Եթէ ձմեռ-այ սառնամանիքը պատահական է, դրա դէմ կարե-լի է մի կերպ կուել, թէև առհասարակ այդ մասին մեր իմացածը և գործադրած միջոցները շատ էլ լը-րիւ չեն:

Այս հարցին ծանօթանանք աւելի մօտիկից:

Մենք շատ անգամ տեսել ենք և գիտենք, որ տեղ տեղ, շուտ ծաղկած ծառերը երբեմն ցրտահար են լինում—կամ, ինչպէս ասում են, ցուրտը տանում է. բացի դա, ցուրտը, նայած ծառի տեսակին նաև ու-րիշ պատճառների, տալիս է ուրիշ վնասներ էլ. այն է՝ աշնան անձրեսային լինելուց ծառի ճղները ուշ են համանում, կլիման խոնաւ է լինում, ցուրտը շուտ է վրայ գալիս և այն. բոյսը վնասում է նաև ծառի տե-սակի յատկութիւնից, ամառը կամ աշնանը շատ ջրե-լուց երբեմն նաև հողը շատ պարարտացնելուց:

Այս ամենը կարող են նպաստել այն բանին, որ ծառը ուշ է նոր ոտեր արձակում, իսկ սրանք, մին-չև ձմեռ չը կարողանալով համանել ու պնդանալ, թոյլ են մնում և ցուրտը դրանց հեշտութեամբ տանում է:

Փորձւած է, որ մատղաշ տնկիները ցրտից աւե-լի են վնասում, քան թէ հին ծառերը, թոյլերը՝ ու-ժեղից, նոր տնկածները՝ վաղ տնկածներից աւելի և այն:

Յի՞ն ցրտերը, որոնք հետզհետէ են սաստկա-նում և աստիճանաբար էլ մեղմանում են, աւելի քիչ են վնասում ծառերին, քան այն ծառերը, որոնք ենթարկւում են եղանակի ծայրայեղ փո-փոխութեանը, այսինքն՝ երբ սաստիկ ցրտին իս-կոյն յաջորդում է հալոցք, կամ երբ փչում է տաք քամին: Ցրտի ամենավտանգաւորը ձմեռուայ երկրորդ կլիմին եղող պարզկայ օրերն են, երբ ցերեկը արևի տակ տաք է լինում, ստերումը՝ ցուրտ, իսկ տաք ցերեկին էլ յաջորդում է պարզկայ գիշերը: Այսպիսի գէպերում ծառի բունի հարաւային կողմի կեղեր շատ է տաքանում և յետոյ, եղանակի փոխւելովը՝ իսկոյն սառչում է և ցրտահար լինում:

Օդի յանկարծակի փոփոխւելը ծառի կենսական գործարանների վրայ շատ վատ է ազդում: Այսպիսի ծայրայեղ փոփոխութեան շնորհիւ գարնանը, ծառի բնի հարաւային կամ հարաւարևմտեան կողմի կեղեր տեղ տեղ, երբեմն էլ գլխէ գլուխ սառչում-մեռնում է: Փշանում են նոյնպէս այդ կողմի ճիւղերի կեղե-ները և մանաւանդ մատղաշ տնկիքը: Սկզբում ցըր-տի վնասը չէ նկատում, բայց յետոյ, երբ սկսում են ծառերը բացւել ու աճել, ցրտահար տեղերի չորս կողմ գանւած կեղերը, ծառի հաստանալուց, ուռչում է, մինչդեռ ցուրտը տարած կեղեր մնում է անփոփոխ, ծառին կպած՝ փոս ընկած:

Պատահում է, որ ցրտից ամբողջ կեղեր չի վը-նասում, այլ սառչում է նրա վերին մաշկը. իսկ տակի նուրբ աստաղը անվնաս է մնում. այս դէպ-քում ծառը գարնանը սկսում է տակից կազմել նոր մաշկ. սա հետզհետէ տակից բարձրանալով, վերի չորացած կեղեր ճաքճքեցնում և պատառուում է:

Պատահում է որ ցրտահար կեղևների ճեղքերից սառչում է բնափայտը. այդ պէտքում սունկի վարակիչ բեղմնիկները (սունկի մանր սերմերը) ճաքերից հեշտութեամբ ներս են մտնում, ծառը սնկակալում է և, շատ է պատահում, որ բոյսը զրանից բուլրովին չորանում է:




Նկար № 1. Ծառի կեղեւի ցրտահար եղած մասերը:

Ուրեմն, ինչպէս տեսանք, ծառերի հիւանդանաւու շատ պատճառներից՝ մէկն էլ սառնամանին է, որից առաջանում է՝ մակարոյծ սնկեր, խուրացաւ, (ռակъ), խնժաքոր և ուրիշ հիւանդութիւններ:

Շատ փորձեր արին որոշելու ծառի ամեն մի արկարութիւնը և նրա պատճառները առանձին առանձին, բայց սա աւելորդ համարւեց, քանի որ այդ տեսակ բոլոր հիւանդութիւնների բժշկելն էլ զրեթէ միատեսակ է: Այն է ա) հիւանդութիւնների առաջն առնելու համար աշնանից պէտք է բնին և հաստ ճրդներին քսել կրակար (վերցնում են քիչ կիր, կովի նոր աղը ու կաւ, այդ բոլորը լաւ լուծում ու քսում վրձինով բնին ու ճիւղերին:

բ) Շատ ցուրտ տեղերում ծառի բունը որպէս զի չը սառչի, պէտք է լինում փաթաթել փալասով, խոտով կամ ճիլօպով, իսկ մատղաշու փոքր տնկիքը անպայման պէտք է պաշտպանել նոյն տեսակ նիւթերով:

գ) Եթէ երեաց որ կեղել արդէն ցրտահար է եղել, պէտք է մեծ դանակով նրա մեռած-չորացած




Նկան № 2. Ծառերին կրակար քսող գանազան ձեւի վրձիններ:

մասերը կտրատել, մաքրել զգուշութեամբ այնպէս որ չը մնասւի նրա տակի քնքոյշ աստառը ու մաքրել այնպէս, որ մսկի բեղմնիկների կամ փթած մասերի և խութերի նշանները չը մնան, իսկ եթէ սրանք խորըն են մտած՝ պէտք է կտրել-հեռացնել հիւանդ մասերը հենց բնափայտի հետ ու լաւ խնամել վէրքը:

Եթէ գոյացած խութի վրայ սկզբում ուշ չը դարձնենք, ասելով թէ ծառը դեռ ամուր է և առողջ, նա հետդիետէ կը զարգանայ, կը շրջապատի ողջ բունը

և, զրկելով ծառի վերի մասը ներքեխց գնացող սնընդարար հիւթերից, կը չորացնի նրան:

Նոյն բանն է պատահում կորցաւոր պտուղ ունեցող ծառերի հետ, ինչպէս օրինակ ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի և բալի, զրանց խեժակալելիս. ուստի անմիջապէս պէտք է փսաւած մասերը կտրել հեռացնել:



Նկար № 3. Ծառի խոռարացաւի սկիզբ:

Խեժակալելը առաջ է գալիս նաև կեղեւի վնաս և լուց. պատահում է որ ծառի պտուղը ժողովելու համար ծառի բնին կամ ճղներին խփում են կարծր բանով օրինակ՝ կացնով, թակով, փայտով, քարով, և այլն, (ինչպէս սովորաբար անում են Երևանում թուր թափելիս ու ձնեխում են ծառի բոլոր ճղների

Նկար № 4. Նոյն խոռարացաւը զարգացած:

կեղեները). կեղեր ֆսաւում է նաև խիտ ճղները իրար քուելուց. նոյնպէս պատահում է որ կեղեւի ճեղքերով տակի աստառը վարակում է մի տեսակ սընկափոշիներից և ցաւը անցնում է բնափայտին. այդ գէպքում կեղեր խեժակալում է և կամ հիւթը դուրս թափւելով ծառը հետզհետէ թուլանում, փթում ու չորացնում է:

և դ) Ծառերի մի քանի տեսակներին ցուրաը աւելի է ֆսասում, երբ նա լինում է խիստ ու երկարատեղ, մանաւանդ երբ քամի է լինում. այս գէպքում տեսնում ենք որ լաւ զարգացած ծառերի փարթամ ճղներից գլխաւորապէս ցրտակող եղածները, որոնք չեն կարողացել մինչեւ ցրտերի ընկնելը լաւ զարգանալ-համնել, նոյնպէս և խոնաւ ու պարարտ հողերում տնկւած ծառերի մատղաշ, մի երկու տարեկան ճղները, ցրտահար են լինում ու չորանում խակ գարնանը, երբ ծառերը բացւում են, ցուրտ տարածների կեղեները սկացած-մեռած են լինում և եթէ կարենք նրանց, կը տեսնենք որ մինչեւ անգամ փայտն էլ գունատել-սկացել է:

Գարնանը այս չորացածների տակի մասերից սկսում է ծառը կանաչել, նոր բողբոջներ արձակել. խակ երբ բնի ցրտահար կողմի մեծ մասն է ցուրտը տարել, պէտք է ծառը գետնի բերանից կտրել, որ նոր բներ դուս գան, կամ թէ, աւելի լաւ՝ արմատիցը հանել և տեղը նորը տնկել:

Ծառի ցրտահար, սկացած ճղները գարնան բացւելուն պէս պէտք է կտրել և վերքը կամ ծառի սպեղանիով ծեփել, կամ թէ սև նաւթ և կամ թէ կուպը (ղաթրան) քսել:

Ծառի վերքի սպեղանին (գեղը) շատ տեսակ է

լինում. ամենից լաւն է վերջնել՝ 16 մաս կովի թրիք,  
8 մաս բացւած կիր, 8 մաս մոխիր և 1 մաս մանր  
գետաւազ. լաւ խառնել ու քսել կարած տեղը:



Նկար № 5. Զմեռվ ցուրտը տարած ծառի տեսքը յաջորդ  
գարնանը՝ տերեւակալելուց յետոյ:

Շատ մեծ ցրտերին չեն կարողանում դիմանալ  
հասակաւոր ծառերն անգամ, մանաւանդ կորպապտուղ  
ունեղողները. պատահել է, որ պարտիզի այդ տեսակ

ծառերի մեծ մասը ցուրտը տարել է: Նպատակա-  
յարմար է այդպիսի սորո կիմայի տւած մնաներից  
ազատւելու համար ցրտին աւելի դիմացող ծառեր  
տնկել ու հետեւել, որ այս տեսակների ճղներն էլ  
մինչև ցրտերի ընկնելը լաւ հասնեն, ամրանան: Հենց  
սրա համար էլ պէտք չէ ամառը, մանաւանդ երկ-  
ըորդ կիսից յետոյ, ծառերի ճղները կտրել. լաւ է  
կտրել նրանց, ինչպէս վերը յիշեցինք, գարնան ըս-  
կղբին և աշնանը տերևաթափից յետոյ, աշնան կտրը-  
ւածը այն նշանակութիւնն ունի, որ նոր սատերը  
ստիպւած չեն լինի տւելի երկարիլ ու մինչև ցըր-  
տերի ընկնելը խակ մնալ ու ձմեռը սառչել:


Պատահում է, որ սատիկ ցրտերին ծառերի ըլ-  
ները, կեղեկ և բնափայտի հետ, զլիք զլուխ ճեղք-  
ւում են. այս ճաքերը նրբան էլ ուզենանք ծածկել,  
շրջով փաթաթել ու կապել, անօդուտ կը լինի. Փչող  
քամիները չեն թողի որ ճաքւած կողմերը միանան—  
կողչեն. այդ դէպքում մնաւած ծառը շի դիմա-  
նայ, կը չորանայ:

Չիւնի էլ պակաս մնաս չի տալիս ծառերին: Վաղ  
աշնանը, երբ դեռ ծառերից տերևները չեն թափւել  
և եկած շատ ձիւնն էլ թացաւուն է լինում, ծառերի  
ճղները չեն կարողանում դիմանալ նրա ծանրութեա-  
նը, ճեղքւում—կոտրւում են: Սրա դէմը առնելու  
համար պէտք է աշխատել, ծառերի ճղները փոխանակ  
փուտած պահելու, պահել աւելի ուղղահայեաց, իսկ ե-  
կած ձիւնը փայտէ երկար ձողերով ծառերից թափել.  
Իսկ եթէ գործադրած այս միջոցներից յետոյ էլ նը-  
րանք կոտրւեն, պէտք է կոտրւածների տեղերը սը-  
զոցով կտրել ու վերքի տեղը կատի հետ խառնած  
աղբ (վեյին) քսել:



Հարկաւոր է ուշը դարձնել նաև, որ պարտիզի միջի ծառերը պատերից կամ ցանկապատերից հեռու տնկւեն, որովհետեւ ձմեռւայ շատ ձիւնը կարող է դրանց քանդել ու պատի մօտ տնկւած ծառերի վրայ թափելով, կարող է նրանց կոտրատել—փչացնել. լաւ կլինի նոյնպէս պատերի մօտ, պաղատու ծառերին որպէս պաշտպանութիւն, տնկել շատ բարձրացող հաստաբուն ծառեր:

Անհրաժեշտ է նաև ձմեռւայ դէմ մատղաշ ծառերի գլուխները փաթաթել ու գետնի մէջ տնկած երկայն ցցերից կապել, որ ձիւնը չը կոտրի:



Ծառերը համուց պաշտպանելու համար պէտք է նրանց տնկել այնպիսի տեղերում, ուր շատ քամհար չէ. աւելի լաւ է կապել ճղները միմեանց հետ, իսկ պառպով ծանրաբենւած ճղների տակ փաղօրօք ամուր նեցուկ-

Նկար № 6. Ճիւղերը կոտրատներ (հաչէք) տնկել: Անդուց պաղպանելու համար կապում են միմեանց հետ երկարէ եթէ քամին ծառին ճղներով:

արմատահան է արել,

պէտք է նրան նորից կանգնեցնել, տեղը դնել ու պարաններով կապուել. իսկ եթէ ծառը շատ մեծ է և կանգեցնելը դժւար, պէտք է բացւած արմատը հողով ծածկել ու բունը լինգերով այնքան բարձրացնել, որ գոնէ ճղները գետնից բարձրանան. ծառը այսպէս պառկած էլ կարող է առատ պատուղ տալ:

## 2) Սնկաթին ՀիմնաԴրիթինների

Մեր ծառերի հիւանդութիւնները երկու տեսակ են լինում 1) մակաբոյծ սունկերից 2) զանազան միջամասներից:

Այս զլիսում մենք կը ծանօթանանք սնկերից առաջացած հիւանդութիւնների և նրանց դէմ կռւելու միջոցների հետ:

Ինչպէս ամենամանը, աչքով անտեսանելի, նոյնպէս և խոշոր տեսակի սունկերը (օր. զլիսարկաւորսունկերի մի քանի տեսակները) վարակում են ծառերի բոլոր մասերը, սկսած նրանց արմատներից մինչև տերմերներն ու պատուղները և առաջացնում են զանազան հիւանդութիւններ: Սրանց աւերիչ յատկութիւնները այնքան զօրեղ են, որ վարակւած ծառի աճելութիւնը հետզհետէ թուլացնում են, բոյսը նւազում է և, եթէ շընկատենք, կամ թէ չը հետեւնք, նա կառող է բոլորովին չըրանալ:

Սունկերով վարակւած բոյսերի նշանները զանազան են: Մեծ ծառերի գետնի երեսի և տակի մասների փայտը ծածկւած է խցանանման (պրօճռա) կեղեղով. երբ սա վարակում է սնկացաւով, թուլանում է նրա կեղեղի կարծրութիւնը, հետզհետէ քայլքայւում է և փթում. այնուհետև նա փուխրանում է և փշրուում ու, փոխելով իր նախկին գոյնը՝ սպիտակում է կամ թէ կարմրում: Այս կերպարանափոխութիւնից յետոյ շատ է պատահում, որ բնի մէջ գոյանում է սունկի:

Սունկի այսպիսի աւերիչ գործողութեան պատճառները նրա մակաբոյծներն (ուրազիտ) են, որոնք ծառի կեղեղի որկիցէ վսասւած տեղից հեշտութիւնով

ներս են մտնում ու այնտեղ, կամաց կամաց զարգացնելով իրենց բարակ թելերն ու բեղմնաւոր պլատուկները, վարակում են ծառը մանր սունկերով, առեթով (զաւով), գլխարկասունկերով և ուրիշ շատ տեսակ ձևերով ու կերպերով:

Այս տեսակ սնկացաւի հետ կուելը թէն շատ դժւար է լինում, բայց որպէս զի սրանք շատ չզարգանան ու չը վարակեն առողջ ծառերն էլ, դարձեալ միջոցներ պիտի դործապրել:

Կուելու միջոցներից գլխաւորները կայանում են նըանում, որ ծառի կեղեփ և վերքերի վրայ պէտք է կանոնաւոր հոգս տանել և ժամանակին հեռացնել — ոչնչացնելով մակաբոյճների գոյութեան նշանները:


Սունկերով վարակւած տերեւնիերի, նոյնպէս և մատղաշ ու մեծ նիների վրայ երեսում են փոքրիկ ուռուցքներ, խուլեր, բշտիկներ, կէտեր, բորբոսներ, ծակոտիկներ, կամ վերջապէս զանազան մեծութիւնով, ձևերով ու գոյներով չորացած կէտեր. երբեմն էլ պատահում է, որ տերեները կուչ են զալիս — ոլորտում են, անչափ և անհաւասար են աճում և այնու (Տես նկար 9):

Եթէ վարակումը շատ ուժեղ է, տերեները թխանում, սևանում, մոխրագունում են և, զադարելով առձելուց, ժամանակից վաղ թափւում են կտոմ թէ չորանում՝ ծառի վրայ են մնում, մինչև ձիւն գալը:

Տերեների մի քանի տարի շարունակ հիւանդութիւնից կարող է ծառի պաղաքերութիւնը վնասվել ու նոյն իսկ ծառը չորանալ, որովհետեւ դրանով նա զրկում է սննդից:

Պուղներն էլ վարակւում են նոյն ցաւերով, ինչ որ տերեները, նրանց կաշի վրայ երեսում են նոյն

բծերը, բշտիկները, բորբոսը, ծակոտիկները և այլն, երբեմն էլ խակ կամ կիսահասած հէնց ծառի վրայ փթում են՝ թափւում, որով մենք զրկում ենք մեր սովասած բերքից ու օգուտից:



Նկար № 7. Գլխարկասունկի, որ վնասում է ծառերի արմատները:

բոլոր քնքոյշ մասերը ծածկւեն հեղուկի կամ գեղի ցողով. սրսկումը կատարում են ամառայ ընթացքում մի քանի անգամ և աւարտում են պտուղի համելուց մի ամիս առաջ:

Այն կարծիքը, թէ սրսկւած պտուղը վնասակար է մարդու առողջութեան համար — սխալ է: Բացի


\*.) Սրսկման գեղերի մասին տես զրքի ցանկում:

սրսկումից պէտք է ծառի հիւանդ մասերը—գետին  
թափած տերեներն ու պտուղները ժողովել ու այ-  
րել:

Այժմ անցնենք սնկային հիւանդութիւնների նը-  
կարագրութեանը և այն միջոցներին, որով կարելի է  
դրանց դէմ կուել ու ծառը փրկել:

1) Գլխարկասունկ, (*սուսերէն*՝ опенокъ, *լատի-*  
*ներէն*՝ agaricus melleus Fl. Dan. նկար 7):

Սա ամենից շատ զարաւում է փշատերի ծառե-




Նկար № 8. Գլխարկասունկը աւերել է ծառի արմատը:

րին (սոսի, եղևնի և այլն). բայց պատահում է նաև  
խնձորենու, տանձենու, բալենու, գեղձենու և ուրիշ-  
ների վրայ էլ: Գլխարկասունկը առհասարակ աշնանն  
է դուրս գալիս վնասած ծառերից կամ թէ նրանց մօտ  
եղած հողից. մատղաշ սունկերը ծածկւած են լինում  
փաթիլանման քողով. երբ համում են սերմերը, նը-  
րանց քողը պատուում է ու տակիցը դուրս են գալիս  
փունջ փունջ՝ մեծ ու փոքրիկ սունկեր:

Վարակւած ծառերի արմատներից զլկարկասուն-  
կերը դուրս գալով շատ ճիւղաւորւած, ու արմատա-  
թելերը տարածում են զետնի երեսը, հասնելով դրա-  
ցի ծառերի արմատներին, մտնում են նրանց կեղեկի  
և բնափայտի մէջ ու հետզետէ փաթաթւում են ար-



Նկար № 9. Սեկային հի-  
ւանդութիւնով վարակւած տե-  
րեւերը չորացած, կուչ եկած:




Նկար № 10. Բալենու վրայ  
գտնող վնասակար սունկ:

մատի բոլոր փայտի շուրջը՝ տափակ-թխագոյն ժա-  
պաւինանման թելերով:

Ծծելով ինչպէս փայտի, նոյնպէս էլ կեղեկի հիւ-  
թը, նրանք առաջացնում են արմատների վրայ խու-  
թեր և սպանում են բոլորովին առողջ ծառը:

Գլխարկասունկը կարող է յաջողութեամբ աճել համեն ծառերի արմատների, բների, նաև գերանների և յատակի խոնաւ տախտակների վրայ ու նրանց շուտով քայքայել ու անպէտքացնել։ Սրանց գոյանալուց



Նկար № 11. 1) Խճչես են դուրով պոկում աբերը ծառի կեղեւից. 2) Խճչես են պոկած տեղեր կուպր քում. 3) և 4) Աբեր կտրող դանակներ։

յետոյ էլ գժւար է լինում բժշկել. մնում է միայն, որ նրա տարածւելու առաջը առնենի. դրա էլ միակ միջոցը այն է, որ վարակւած ծառը պէտք է արմատից հանել. աշխատելու է, որ արմատի մի փոքրիկ

կտորն ու փշրանքն անդամ չը մնայ. Ժողովել բոլոր սունկերը, զգոյշ կենալ, որ սրանց հատիկներից չը թափւեն—ցրիւ չըգան ու այս ամենը, թէ ծառի մասերը և թէ սունկերը, այրել։

2) Աբերը (սուսերէն՝ տրուտուկъ или губки, լտտ.). *Polyporus hirsutus* Fr. (նկար 10). առաջանում է բնափայտի փթելուց։ Աբերի կամ ծառասպունդի շատ տեսակներ են լինում. որը կինամոնագոյն (գարչինի) է լինում և որը սպիտակ։ Խնձորենու սպունդը տանձենու վրայ էլ է գուրս դալիս։

Եմենատարածւածն է սպիտակագոյն, լողոտնածու ջրալի արեթը (*Polyporus*). սա գոյանում է տանձենու, խնձորենու, բալենու և սալորենու վրայ և տուած է բերում ծառի «սպիտակ» անւանւած «փըթումը»։ Խսկ բալենու վրայ լինում է նոյնպէս և՛ բալասունդը (*Polyporus hirsutus* Fr.):

Եյս տեսակ սունկերը, բայց ծառը, փթեցնելուց, չեն թողնում, որ նրա մէջ մննդաբար հիւթերը շարժւեն. գոյացնում են փճուկներ. պինդ քամիների ժամանակ ծառը չի կարողանում դիմանալ և հեշտ կոտրում է. թէկ լինում են նաև վարարկաբուն-փըճուկաւոր ծառեր, որ երկար ժամանակ են ապրում ու լաւ պտուղ են տալիս, բայց դա ուրիշ պատճառներիցն է։

Աբերացալի առաջն առնելու համար պէտք է գլխաւորապէս ուշադրութիւն դարձնել ծառի կեղեկի և նրա վէրքերի վրայ՝ մի՛ գուցէ բժշկելիս վարակեն բոյսը նրա սերմիկներով, որոնք կարող են հէնց վիրաւորւած տեղերովը ծառի մէջ մտնել։

Եթէ ծառը վարակւած է միայն այս տեսակ սունկերով (աբերով), պէտք է նրանց նշանները ե-

բնալուն պէս, քանի որ շուտ է և սերմերը չեն հաս-  
սել, կտրել նրան դանակով կամ դուրով և խկոյն  
դուրս հանած կտորը այրել, վերքը լաւ քերել սուր  
քերիչով ու վրէն զաթրան (дегтъ) քսել: (Տես նկար  
11): Այս բժշկութիւնը կարելի է մինոյն ծառին  
անել տարենը 1—3 անգամ, որով ծառը շատ երկար  
տարի կարող է առողջ մնալ և պտուղ տալ:

3) Խութը (Ракъ, Nectria ditissima Tul.) գոյա-  
նում է գլխաւորապէս ծառի կեղեկի վնասւելուց կամ թէ  
ուրիշ տեսակ սունկերից վարակւելուց:

Սա երեսում է տանձենու և ինձորենու  
վրայ: Հիւանդութեան պատճառն այն  
է՝ որ երբ կեղեկ տեղ տեղ անզգայա-  
նում, մեռնում, չորանում ու վայր է  
ընկնում, բնի այդ մասը մերկանում  
է, վերքի կողքերը ուռչում—հաստա-  
նում են, դրանց մէջ եղած փոսիկնե-  
րում երեսում են մանր, բաց-կարմրա-  
գոյն սնկի հատիկներ. վերքը տարեց  
տարի զարգանում—մեծանում է և կա-  
րող է պատել բնի կամ ճղան շուրջը,  
որի վերին մասը մեռնում է:

Խթասունկի մակաբոյծը կարող է  
զարգանալ ինչպէս կեղեկ, նոյնպէս և  
բնափայտի մէջ. սրա սերմերը կարող  
են վարակել ծառը միայն կեղեկի վնաս-  
ւելու դէպքում:

Գիտական հետազոտութիւններով  
հաստատած է, որ ծառը վարակում  
է ոչ թէ միայն սունկերի սերմերից,  
այլ նաև զարնանը նրանցից ծորած



Նկար № 12.  
Խութացաւ (խըն-  
ճորենու) տառա-  
ջացած Nectria  
սունկի վարա-  
կումից,

հիւթերից. այս հիւթը կարող է մեռցնել մի տարե-  
կան սատերը և պաղաքեր կոկոնները: Նէկտրիա (Nec-  
tria) սունկի մէջ ապրում են մի տեսակ միջատ-  
ներ (Carpocapsa Wöberiana որի որդերը այդ հե-




Նկար № 13. Խնձօրենու կեղեկի

Նկար № 14. Հնացած  
չորանալը խութացաւից: Կեղեկի խութացաւ, որը զրջա-  
տակ գտնվում է վնասող ճիմակի պատելով ողջ ճիմը, մեռց-  
յելոք:

նում ու չորացնում է նրան:

դուկից դուրս չեն գալիս ու շրջապատում են պլա-  
զատու ծառերի բողբոջները ու ճները և որից ծիրա-  
նենու, գեղձենու, սալորենու, կեռասենու և բալենու  
վրայ խեժ է գոյանում, ծառը խեժակարում է:

Խութը բժշկելու միջոցներից մէկն էլ այն է, որ պէտք է նրա կողքերի կեղեր դանակով ճեղքուածել, յետոյ կտրել վարակած մասը՝ բնափայտի հետ այնպէս, որ խութի ամենափոքր կտորն անդամ չը մնայ ծառի վրայ ու յետոյ վէրքին քսել դաթրան, խակ կտրած հանած կտորը այրել:



Նկար № 15. Սղոցով կըտրելով կարելի է փրկել ծառը խուրացաւից:

Եթէ խութը գոյացել է վերը յիշած միջատների շնորհիւ, քանի որ նա դեռ փոքր է, պէտք է սղոցել համել և այրել. խակ եթէ վերը մեծ է և դեռ ևս հնարաւոր կը լինի բժշկել, հարկ չկայ նրան կտրել, այլ պէտք է դնել նրա վրայ հաստ սպեղանի (4 մաս

Նկար № 16. Հաստ զերտով սպեղանի (զամազա) քսելով խուրացաւը բժշկում են:

կաւ, 1 մաս կիր և մի մաս կովի թրիք. լաւ խառնել, հունցել ու գործ ածել), այնպէս որ, վէրքից 1 վերշոկ բարձր, նոյնքան էլ ցածրից ծածկէ, նըանշորով լաւ փաթաթել ու այնպէս կապած պահել մինչեւ հետեւալ գարունը: Այս փաթեթի տակ խութ գոյացնող որդը բօժօժ կը կապէ ու թիթեռն կենէ, բայց, չկարողանալով գուլոս գալ, կը սատկի: Ի հարկէ, խութերը միայն քիչ եղած միջոցին:



Նկար № 17. Խօնցպես պէտք է կապել սպեղանի քսած տեղը հնարաւոր կը լինի վերոզրեալ միջոցներով հեշտութեամբ բժշկել:

Այսքանը այն սունկերի մասին, որ վնասում են ծառի արմատն, բնի կեղեւն եւ բնափայտը այժմ անցնենք ծառի պտուղն ու տերեները վնասող սնկային հիւանդութիւններին:

**Յ) ԺԱՄԵՐԻՆ ՎՆԱՍՈՂ ՄԻՋԱՑՆԵՐԸ ԵՒ  
ՆՐԱՆՑ ՀԻՄ ԿԹԻԵԼՈՒ ՄԻՋԱՑՆԵՐԸ**

Պաղատու ծառերին վնասող բազմաթիւ եւ բազմատեսակ միջատներից ամենից տեղի վտանգաւորները նրանք են, որոնք ծծում ու կրծում են ծառի ամենաքնքոյշ և էական մասերը—այն է ծաղիկները, բողբոջներն ու տերեները:

Ծանօթանանք այդ տեսակ միջատներից նրանց հետ, որոնք ամենից շատ են տարածւած մեր այդիներում և որոնցից ամեն տարի մեծ չափով վնասուում են մեր պարտէզները:


**ԲՈՂԲՈՋՆԵՐ ՈՒ ՏԵՐԵՒՆԵՐ ՎՆԱՍՈՂ ՄԻՋԱՑՆԵՐ**

1) Խնձորենու քրուու (ոռւսերէն՝ яблонная моль կամ майская червь, լատիներէն՝ *Hyalophora malunella* Zell): Աս այն ճիճուն է, որը յայտնի է մեղանում ամեն տեղ խնձորի քրուու անւան տակ և որի հասցրած վնասները, եթէ հաշւենք, միշտների է հասնում:

Խկարագրութիւն: Խնձորի թրթուոը մեծ որդ չէ, նա հազիւ կէս վերշոկ երկարութիւն ունենայ, նրա գոյնը գորշ—զեղին է, իսկ մարմնի վրայ կան երկու շարք սև կէտեր. թիթեռ դառնալով, նրանց առաջին գոյգ թևերը լինում են սպիտակ՝ վրան դարձեալ սև կէտերով:

Խնձորի թրթուոը ծառի վրայ նկատում ենք գալրնանը շուտ, հէնց որ ծառը սկսում է բողբոջ տալ.

Արանք բարձրանում են աչքերի վրայ և սկսում են ուտել մատղաշ տերեները, այնուհետեւ այդ տեղից անցնում են ճիւղերին, նստում են տերեների վրայ և լափում են նրա միջի քնքոյշ մասը, սկսելով տերեկի ծայրերից. Երբ փոքր ինչ մեծանում են, ճիւղում են իրենց համար բոժոժ, ժողովուում են մի տեղ խմբերով, խիտ ոստայնով պատում են ծառի



Նկար № 18. Խնձորի քրուուները իրենց ոստայնութեամ:

Ճիւղերի զվարին գտնւած տերեները և այդպիսով, շինելով այստեղ իրենց համար բներ, ոչնչացնում են ոչ միայն տերեկի քնքոյշ մասերը, այլ և նրա տեղի կոսիտ երակները:

Այս տերմունքը կատարւում է մեծ չափերով մայիսին, դրա համար էլ շատ տեղ նրանց մայիսի որդ են անւանում: Մայիսի վերջերին սրանք սկսում են

Խմբւել, հարիւրներով միմեանց մօտ ժողովւել, և այս-  
տեղ ամեն մէկը հիւսում է իր համար մանր, քնքոյշ,  
սպիտակ կոկններ, մանում է մէջը և դասնում է  
այդտեղ հարսնեակ. չանցած 10 օր, նա պատում է  
կոկնը և գուրս թռչում. այս անդամ արդէն սպի-  
տակ թիթեռ դարձած: Մի քանի օրւայ մէջ թի-  
թեռները (էգերը) ածում են 20—60 հատ ծու (սերմ)  
և կացնում են զրանց ծառի ոստերին՝ նրա հարթ  
կեղեն. ձերը սկզբում սպիտակ են լինում՝ պատած  
գեղին լորձիւնով, մի տաս օրից յետոյ կարմիր գոյն  
են ստանում, իսկ էլի մի տաս օրից՝ ընդունում են  
ծառի ճիւղի գոյնը և ճիւղերից այլ ևս չեն գանա-  
զանուում: Անցնում է 15—20 օր, այս ձերը կենդա-  
նանում են, նրանցից գուրս են գալիս մանր ճիճու-  
ներ, որոնք մտնում են ծառի կեղենի տակ՝ աչքերին  
մօտ և այնտեղ էլ ձմեռում են:

Հէնց որ գարունը բացուում է, այդ մանր ճի-  
ճուները շարժուում են իրենց բներից, յարձակուում  
են նոր բացւող քնքոյշ տերեների վրայ և անվերջ  
լափում:

Պնաար: Ինչպէս ասեցինք, թրթուոի տւած վր-  
նասը շատ մեծ է. նախ այն, որ նրանք կրծում են  
ծառի քնքոյշ տերեները, իսկ յետոյ ահազին թւով  
ոչնչացնում են նաև մեծ տերեները. ծառը, զրկելով  
իր համար շատ կարեոր այդ մասից, թուլանում է  
և հիւանզանում, իսկ պառւղները մնում են մանր,  
չգարգացած և մեծ մասով թափում են:

Մեզնում այգետերերը մինչև օրս ոչ մի միջոց  
ձեռք չեն առնում կուելու այդ միջատի դէմ և, հա-  
մարելով զրան Աստծու պատիժ, արդէն մի տեսակ  
հաշտուում են զրանց հետ և տարէց տարի զրկուում

համ բերքից, համ էլ ուժասպառ են անում խնձորե-  
նու ծառը:

Կուելու միջոցներ: Սրանից ընդամենը մի 10—  
15 տարի առաջ յայտնի չէր այնպիսի մի միջոց,  
որով կարելի լինէր հիմնաւոր կերպով կռւել այդ  
թրթուոի դէմ. ողջ կոփու կայանում էր նրանում, որ  
ձեռքով ժողովում էին զրանց կամ, ծառի տակ չար-  
սաւ վտելով, շաղահարում էին ծառը և չարսաւի վը-  
րայ թափւած ճիճուները, ոչնչացնում էին. բայց  
զրանով գործին շատ էլ օգնել չէր լինում, որովհետեւ  
նախ անկարելի է բոլոր որդերը բռնել, ժողովել և  
ապա՝ ձեռքով ժողովելը մեծ ծախք ու աշխատանք  
էր պահանջում:

Այժմ, երբ գտնուած է սրկսելով զրանց ո-  
չնչացնելու միջոցը, իզուր չի անցնում նաև հին  
միջոցն—այն է որդեր ժողովելը, երբ նրանք ժո-  
ղոված են լինում բներում, զրանց պոկելն ու ո-  
չնչացնելը: Դրանով կարելի է տասնեակ հազարնե-  
րով կոտորել և մեր այգուն բաւականին մեծ օգուտ  
տալ. բայց այնուամենայնիւ թրթուոին կոտորելու  
ամենակարական միջոցը թունաւոր հեղուկներով  
սրսկելին է.

Մրւկումը: Սրսկման էութիւնը կայանում է հե-  
տեւալում. աչքի առաջ ունենալով որ որդերը (թրթ-  
թուոր) կրծում, ուտում են խնձորենու տերեները,  
որոնք նրանց միակ կերակուրն են, թունաւոր հե-  
ղուկով սրսկելով տերեները, զրանով մենք թունաւո-  
րում ենք տերեները՝ թրթուոի կերակուրը և, երբ  
նա ուտում է զրանց, մի կամ մի քանի ժամից յետոյ  
սատկում է:

Ահա այսպիսի թունաւոր հեղուկ, պատրաստում  
են փարիզեան կանաչ անւանւած դեղով:

Փարիզեան կանաչ: Դա կանաչ գոյն ունեցող,  
ջրի մէջ չը լուծւող, փոշի է: Եթէ ուզում ենք, գիցուք,  
մի վեդրօ դեղ պատրաստել, պէտք է վերցնենք  
3—4 մսխալ այդ փոշուց և երկու այդքան  
էլ (8 մսխալ) նոր հանդցրած կիր. կիրը ոկզ-  
բում բացում են 2 բաժակաչափ ջրի մէջ, մաղի մի-  
ջով քամում են, որպէս զի միջի կոշտերը դուրս գան,  
յետոյ կիրը ածում են այս մեր վերցրած մի վեդրօ  
ջրի մէջ, լու խառնում և ապա մէջը զցում են 4  
մսխալ փարիզեան կանաչ\*) և նորից խառնում:


Մասնագէտ Ե. Շրայնէրը խորհուրդ է տալիս կրի և  
դեղի հետ խառնել նաև մի վեդրօ դեղի համար  $\frac{1}{4}$  ֆունտ  
ալիւր, որը պէտք է բացել ջրի մէջ, շփոթ շինել և  
ապա ածել դեղի մէջ, ի հարկէ նախաղէս շփոթը մա-  
դից անց կացնելով. այժմ, երբ ջրի մէջ ածել ենք  
կիրը, փարիզեան կանաչն ու ալիւրի շփոթը—դեղը  
պատրաստ է և կարելի է գործադրել—այսինքն յա-  
տուկ գործիքների՝ սրսկիչների մէջ ածելով, սրսկել  
ծառը—նրա ճիւղերն ու տերեները:

Նոյն Շրէյները, համաձայն իր բազմաթիւ յաջող  
փորձերի, փարիզեան կանաչից դեղ պատրաստելու հե-  
տևեալ չափերն է տալիս\*\*), հաշւելով քսան վեդրօ  
(30 ֆունտ) ջրի վրայ:

\*) Փարիզեան կանաչը թոյն լինելով, պէտք է, զգոյշ  
լինել, որ նրա փոշին չմանի բերան, քիթ և այլն:

\*\*) Տես ժурналъ „Плодоводство“ № 4: 1909 г. „Борь-  
ба съ главными вредителями садоводства“ յօդւածը:  
Ծան. Խմբ.

- |                   |                                    |
|-------------------|------------------------------------|
| 1) Զուր           | 20 վեդրօ                           |
| 2) Փարիզեան կանաչ | 27 լոտ (4 զօլ. 1 վեդ. ջրի վրայ)    |
| 3) Զհանգցրած կիր  | 24 » (8 զօլ. 1 » » »               |
| 4) Ալիւր          | 5 ֆունտ ( $\frac{1}{4}$ ֆ. 1 » » » |
- Փարիզեան կանաչը\*) ծախուռմ է դեղատան ապրանք-  
ների ամեն մի խանութում, կամ՝ կովկասեան Գիւ-  
ղանտեսական Բնկերութեան մէջ—Թիֆլիսում-պաշ-  
կան (2½ ֆունտը) արժի 80 կոպ: Քսան վեդրօ դեղով,  
կան ( $2\frac{1}{2}$  ֆունտը) արժի 80 կոպ:




Նկար № 19. Վերմորէի «Եկլիեր» սրսկիչը, որով սրսկում են  
փարիզեան կանաչը:

որին կդնայ մօտ 1 ֆուտ փարիզեան կանաչ, կարելի է  
սրսկել 25-30 միջակ մեծութեան խնձորենի: \*)

\*) Փարիզեան կանաչը ջրի մէջ չլուծւող դեղ լինե-  
լով, պէտք է սրսկելուս շուտ շարժել սրսկիչը, որպէս  
զի դեղը տակը չնստի:

Ծ. Խ.


Ընչո՞վ պէսէ է սրսկելի: Ծառերը, որպէս և խո-  
ղողի վազերը սրսկելու համար կան յատուկ մեքենա-  
ներ - սրսկիչներ (пульверизаторի): Դրանք զանա-  
զան մեծութեան, մեծ մասսամբ պղնձից շինած աման-



Նկար № 20. Ինչպէս են Վերմորելի «Էկլէր» սրսկիչին եղեցն  
յարմարեցնելով, սրսկում բարձր ծառերը:

Ներ են, ուր լցնում են 1—2 վեղոօ հեղուկ դեղ. յե-  
տոյ յատուկ կաշիներով ամրացնում են մէջքին և, շար-  
ժելով մեքենայի կոթը վեր ու վար, նրա միջից, ողի

ճնշման օգնութեամբ, դեղը անցնում է րեզինի խո-  
ղովակից և, մտնելով սրա ծայրին ամրացրած բարակ  
անցքից, փոշանման անձրեի պէս դուրս է շպրտում։  
Մնում է միայն, որ սրսկող մարդը ջրի այդ փոշին  
ուղղի ծառերի վրայ. այդ դէպքում ծառի բոլոր մա-  
սերը պատում են դեղի մանր ցողիկներով, որոնք,  
տեղն ու տեղը չորանալով, կոչում են տերեկն։ Երբ  
միջատը ուտում է տերեկ կամ բողբոջը, նա թունա-



Նկար № 21. «Սիֆոնիա» սրսկիչը, որը օդի ոյժով դուրս է  
շարտում դեղը։

տորւում է և նոյն օրը սատկում, առանց կարողանա-  
լու իր աւերիչ գործը շարունակել։

Այժմ բազմաթիւ գործարաններ շինում են այդ  
սրսկիչներից, թէ մէջքին կապելու և ձեռքով շար-  
ժելու և թէ աւելի մեծերը, անիւների վրայ ամրա-  
ցած։

Սրսկիչների մէջ մեզնում ամենից տարածւածը  
համարւում է Վերմորէլի սրսկիչը, «Էկլէր» անունով։  
(Տես Նկար № 19): Կան նաև Գոլգէրի, Պլացի, Եղբ. Փու-  
թանների սրսկիչները։ Վերմորէլի «Էկլէր» սրսկիչը

արժի 12 բուրլի և կարելի է գնել թիֆլիզում՝ թէ Կովկասեան Գիւղատ. Ընկերութիւնից և թէ զանազան պահեստներից\*): Բարձր ծառեր սրսկելու համար, սրսկիչների ծայրերին ամբացնում են եղեգնի ձողեր, որոնց շնորհիւ կարելի է լինում սրսկել 7-8 արժին բարձրութիւն ունեցող ծառերի ամբողջ կատարը իր բոլոր ճիւղերով ու տերևներով: (Տեսնկ. 20):

Կայ սրսկիչների մի ուրիշ տեսակն էլ, երբ հարկաւոր չի ձեռքով շարժել, այլ դեղը, ամանի մէջ լցնելուց յետոյ, մեքենայի վրայ յարմարացրած մէ յատուկ գործիքով օդ են լցնում նրա մէջ և այդ օդը ինքը հրում է հեղուկին դուրս: Այդ դէպքում սրսկողի մի ձեռքը ազատ է մնում՝ փոխ է փոխ բոնելու խողովակը, նրան այս կամ այն ուղղութիւնը տալու համար:

Այդ տիպի սրսկիչներիցն է «Սիմոնիա» կոչող մեքենան, որ արժի 20 բուրլի և կարելի է գնել դարձեալ նոյն պահեստներից: (Տես նկ. № 21):


Ե՞րբ պէս է կատարել սրսկումը: Ծառերը թրթուից ազատելու ամենագլխաւոր գաղտնիքը կայանում է սրսկումը իր ժամանակին կատարելու մէջ: Աչքի առաջ ունենալով, որ թրթուոր ըսկըսում է շարժել և ծառերին վնասել հէնց որ տերևները սկսում են նոր բացւել—այն է ապրիլի մէջ և, նաև այն, որ այդ ժամանակ նրանք աւելի մանր են, տերեները քիչ, ծառը աւելի մերկ, հէնց այդ ժամանակը սրսկման ամենից յարմար շրջանն է: Մաստի պէտք է աշխատել ահա այդ ժամանակ էլ կա-

\*) Տես գրքի վերջում յայտարարութեան բաժինը,

տարել առաջին սրսկումը, որ մի անգամից թրթուուների մեծ մասը ոչնչանում է. Եթէ պատահեց, որ սրսկումից անմիջապէս յետոյ, անձրև եկաւ և դեղը սրբեց, սրսկումը պէտք է կրկնել:

Պատահում է, որ դժւար է լինում մի անգամ սրսկելով թրթուոներին ոչնչացնել, այդ դէպքում անհրաժեշտ է սրսկումը կրկնել երկու շաբթից յետոյ, նոյն չափով վերցրած դեղով. թէև, ինչպէս հաւատացնում է Շրէյները, եթէ առաջին սրսկումը կատարւած է իր ժամանակին, ինամքով եւ դեղն էլ պատրաստած է լաւ—պէտք է հաւատացած լինի, որ մենք ոչնչացրել ենք մեր ինձորենիների ամենամեծ եւ ամենավտանգաւոր թշնամուն—թրթուուին:

2) ՃիճՈՒ—պտղի որդ (ոռւսերէն՝ պլոծոյօրկա, լատիներէն՝ *Carpocapsa pomonella*, վրացերէն՝ ճիա):




Նկար № 22. Պտղի որդը, երա թիթեռն եւ պտուղը, որից դուրս է եկել նա:

Նկարագրութիւն. Ժողովուրդը միշտ գործ է ածում. «ինձորի ճիճու», «տանձի ճիճու», «ճիճուտ սալոր» և այլն դարձաւածքը. և այդ ճիճուն այն որպէն է, որը թրթուից ոչպակաս վնասներ է տալիս մեր պտուղներին, իսկ դրանց մէջ ամենից շատ վընասում է ինձորին:

Այս ճիճուից դուրս եկած թիթեռը մեծ չէ. նա

սովորաբար թռչում է մայիսին և ձու է ածում խըն-  
ձորի, տանձի գեռ չհասած, մանր պտուղների վրայ:  
Մի շաբթից, ձւից առաջանում է ճիճուն բաց կար-  
միր գոյնով, յետոյ գոյնը աւելի մուգանում է.  
սկզբում նա տեղաւորւմ է երկու միմեանց կտած  
խնձորների արանքում, յետոյ կրծում է պտուղը և,  
մանելով նրա մէջը, ծակելով համում է խնձորի մի-  
ջի սերմերին, որոնք նրա ամենասիրելի կերակուրն են.  
սերմերն ուտելուց յետոյ, մի ուրիշ անցքով նա կա-  
մաց կամաց դուրս է գալիս, իսկ անցքի մէջ մնում է  
նրա սև կղղանքը, որը խսկոյն աչքի է ընկնում (գլ-  
րանց համար է, որ ասում ենք՝ ճիճուտ, որդնուա-  
խնձոր, տանձ և այլն): Դուրս գալով խնձորի միջից,



Նկար № 23. Խնձորը, որի մէջ բուն և դրել որդը:

Նա բերնից բաց է թողնում բարակ թել, որի վրայով  
և իջնում է գետին: Մեծ մասամբ նա վայր է ընկ-  
նում կերած խնձորի հետ, որը, չկարողանալով լաւ  
հասնել, թափւում է ծառից: Եւ որովհետեւ որդի առ-  
բելու շրջանը տեսում է 4—5 շաբաթ, ուստի և նա  
ժամանակ է գտնում նորից ծառ բարձրանալ և վա-  
սել մի այլ պտուղ: Ինչպէս առեցինք, որդը 4—5 շա-

բաթից յետոյ իրեն համար կոկոն է հիւսում և մէջը  
մնում ամբողջ ամառը, աշունը, մինչև հետևեալ  
դարուն և, մայիսին կոկոն դառնալով, մի ամսից վոխ-  
ուում է թիթեռի, ձու ածում, որից և դուրս են գա-  
լիս մեր յիշած որդերը:

Վճար: Ճիճուի կամ պտղի այս որդի վնասը  
չափազանց մեծ է. գժւար կպատահէք մեզանում մի  
այգի, ուր չլինեն այդ աւերիչները. այնպէս որ, եթէ  
հաշւի առնենք պտուղի այն ահազին քանակը, որ կեռ  
չհասած թափւում, ընկնում են ցած, կամ թէ, հիւսն-  
դարնալով, ժամանակից շուտ համում և փշանում են,  
այն ժամանակ պարզ կլինի վնասի այն քանակը, որ  
ստանում ենք մենք զրանց զէմ կուելու կամ զրանց  
ոչնչացնելու միջոցներ ձեռք չառնելով:


Կուի միջոցները մի քանի տեսակ են: Աչքի առաջ  
ունենալով, որ զրանք ապրում են ցած ընկած, որդ-  
նուած պտուղների մէջ, անհրաժեշտ է գետնից ժո-  
ղովել բոլոր որդնուած պտուղները և խսկոյն և եթ  
այրել զրանով մենք ոչնչացրած կլինենք հազարաւոր  
որդեր. միաժամանակ պէտք է շաղահարել այդպիսի  
ժառերը, որոնց վրայից գետին կթափւին որդնուա-  
ծները, որպէս զի զրանց էլ ժողովել և այրել:

Երկրորդ միջոցը կայանում է ծառի բների շուր-  
ջը որսօղակներ շինելու մէջ:

Սա կայանում է հետեւեալում: Գարնան սկզբում  
ծառի բնի վրայ, գետնից մօտ մի արշին բարձրու-  
թեամբ կապում են քամարի նման 2—3 վերջոկ լայ-  
նութեան հին շորի կտորներ (փալաս). շորի վրայ  
փայտէ փոքրիկ թիակով քսում են կպչուն նիւր, որը  
պատրաստում է այսպէս. վերցնում են քսան գըր-  
ւանքայ կանեփի իւղ, եփ են տալիս զրան 10 գըր-

Խողի ճրագւի հետ, լաւ խառնում են և ապա քաշմում շորի միջից և քամածի մէջ ածում երկու փութ սե կուպը և լաւ խառնում. այժմ երբ կպչուն հիւթը պատրաստ է, պէտք է մեր ասած շորի վրայ քսել դրանից՝ կէս մատ հաստութեամբ և այնպէս կապել ծառի բնին, որ կպչուն հիւթը կպչի ծառի կեղեին, խակ այս քամարը թելով ամուր կապել ծառին:

Որոզակը նրա համար է, որ երբ թէ այս և թէ ու-



Նկար № 24. Պտղի օրդերը բուն են դրել ճիւղերի մէջ. որդերից մէկը առանձին:


Իիշ որդերը գետնից ծառ բարձրանան, նրանք պէտք է անցնեն քամարի տակից. բայց, մտնելով այստեղ, կը պչում են այդ կպչուն հիւթին և, չկարողանալով առաջ գնալ, հազարներով սատկում են:

Քարնանը կամ ամառը մի քանի անգամ արձակում են քամարները—որոզակները, մաքրում են նրա մէջ ժողոված որդերը, նորոգում են կպչուն հիւթը և նորից կապում են ծառին:

Այս հեշտ միջոցով յաջողւում է անթիւ վնասակար միջատներ որսալ և ոչնչացնել:

Կուելու երրորդ միջոցը փարիզեան կանաչով (տես եր. 34) սրսկիեն է: Սրսկումը պէտք սկսել գարնանը շուտ, երբ ծաղկից նոր է պտուղ գոյացել. այնուհետև սրսկումը կը կնում են երկու շաբաթը մի անգամ, ընդամենը երեք անգամ: Որպէս, ուտելով պտղի թունաւորւած կեղեր, սատկում է: Եթէ սրսկելուց յետոյ խկոյն անձրև եկաւ, սրսկումը պէտք է նորից անել, որովհետև գեղը անձրեկի կաթիների հետ իջնում է և իր ոյժը կորցնում:

3) Ծաղկակեր (*ոռւսերէն*՝ յանոնի ճոլգոնոսիկն, *լատիներէն*՝ Anthonomus pomorum L.):



Նկարագրութիւն: Դա մութ գոյնի, հագիւ փայտովիկ չափ մի միջատ է, որի էգը գարնան սկզբներում իր սուր կնձիթով ծակոսում է խնձորենու և տանձենու ծաղկի կոկոնները և մէջը ձուածում. ձուից գուրս ե-

Նկար № 25. Ծաղկակերը՝ բգեց (մեծացրած), հարսնեակը եւ կած թրթուրը ուտում է զը (կոկոնը), կած թրթուրը (կոկոնը): ծաղկի ներսի մասերը (բողբոջն և փոշանօթը)

և այդպիսով չորացնում, անպէտք է դարձնում ապագայ պտուղը: Յունիս ամսին այստեղից դուրս է գալիս արդէն բոլորովին ձևակերպւած միջատը և ըսկում է ուտել տերեկները:

Ծաղկակերը ձմեռը անց է կացնում ծառերի

Ճեղքերի մէջ, իսկ գարնանը նորից բարձրանում է ծառերի վրայ և իւր աւերմունքը սկսում:


Կուելու միջոցներ: Դրա դէմ կուելու համար հարկաւոր է գարնան սկզբներում ծառի բուճը գետնից մօտ մի արշին բարձրութեամբ կապել հին շուրով, հաստ կարգունով կամ փալասով և այդ օղակին քանի որևէ կպչուն նիւթ, օրինակ ձիւթ (կուպը) կամ սոսինձ և փաթաթել ծառի բուճին այնպէս, որ կուպը մասը կպչի ծառին. միջատը, գետնից ծառ բարձրանալիս, կպչում է օղակին և այդտեղ էլ սատկում:

Բացի դրանից, հարկաւոր է նոյնպէս չորացած կոկոնները ծառից հաւաքել և այրել, իսկ գարնանը և ամառուայ ընթացքում ծառը սրսկել փարիզեան կանաչով, (տես խնձորի թրթուսի բժշկութիւնը): Ծառը թափ տարով էլ կարելի է հաւաքել կենդանի մնացած միջատը, որովհետև նրանք, շաղահարելիս, իսկոյնեթ գետին են զլորւում. դրա համար պէտք է ծառի տակը փռել լայն չարսաւ և առաւօտեան արևածագից առաջ ծառի ճիւղերն թափ տալ. այդ ժամանակ այդ միջատը ցրտից կուչ եկած է լինում և իսկոյն ընկնում է չարսաւի վրայ. ժողովածը պէտք է այրել կամ ոչնչացնել իսկոյն:

4) Թրբուր երկրաչափ (*ոռուսերէն՝* пяденица зимняя и пяденица обдирало, *լատիներէն՝* Cheimatobia hibernata L. և Hiberna defoliaria): Այդ երկու միջատների կենցաղավարութիւնը և պտղատու ծառերին հասցրած վասները համարեա միատեսակ են. դրանք միմեանցից զանազանուում են միայն արտաքինով, այն է խէյմատօրիա բրումատա՛ի թրթուրը կամ գոյնի է և աւելի փոքր, իսկ երկրորդ միջատի

թրթուրը մութ դեղին գոյն ունի և նախշած է ու կէտերով:

Թրթուրը ուտում է տերևները և դրանով մնասում ծառին, իսկ յուլիս ամսին իջնում է ծառից և հողի տակ բօժօժի ձևափոխուում: Բօժօժից աշնանը թիթեռներ են գուրս գալիս և այդ թիթեռի էգը (մենելով անթե) նոյն աշնան բարձրանում է ծառի տերևների վրայ և կոկոնների տակ ձու ածում: Այդ ձուերից գուրս են գալիս թրթուրներ, որոնք սկսում



Նկար № 26. Երկրաչափի բրունալ՝ անքեւ եզը, քեւառոր որձը եւ երանաւեկը:

են նախ ծառի կոկոնները և ապա նաև տերեր փչացնել:

Բացի դրանից, Խէխմատօրիա Բրումատա՛ի թրթուրը սարդի նման՝ թելերով շրջապատում է տերեները և ապա, ուտելով, ծակուում նրանց:

Կուելու միջոցներ: Այդ միջատների հետ կուելու համար հարկաւոր է նախ և առաջ աշնան սկզբներում, երբոր թիթեռը գեռ չէ բարձրացել ծառ և ձու ածել, ինչպէս նկարագրեցինք արդէն՝ ծառի բնուրջը շնել—նախազգուշական օղակներ՝ կպչուն

**Հիւթերից:** (Տես՝ խնձորի ճիճու՝ անտօնօմուս պօմօքում): Բացի գրանից, տերևների նոր բացւելու ժամանակ և ապա ամեն երկու շաբաթը մի անգամ, ընդամեն երկու կամ երեք անգամ, պէտք է պտղատուծառերը, որոնց վրայ երևան են գալիս մէկ կամ միւս



Ենիսաւոր մետաքստիքը էլեկտրական է ածում,  
որից բազում կ. որդի առ հարսմակի:

**միջատը, սրսկել փարիզեան կանաչով:**

Մետաքսարեր—Երեք տեսակի՝ կենաւոր, (ռուսերէն՝ не парный шелкопрядъ. լատ.՝ Ocneria dispar L., հասացակ—(ռուսերէն՝ шелкопрядъ златогузка. լատ.՝ Porthesia chrysorrhoea) և օղակա-

шишбі (*поповка*) шелкопрядъ кольчатый, *L* и *Gostrpacha neustria* L.:

Այս երեք միջամտները, որոնք մետաքսարեր ընդ-հանուլը անուն են կրում, պաղատու այզիներին ահա-գին փասներ են տալիս, ուտելով ծառի կոկոնները և տերերը:

լինելով տարբեր գոյնի և մեծութեան, երեքը  
մարմինն էլ բաւականին խիտ մազերով է լինում  
ծածկւած։ Սրանցից

5) Կենաւոր մետաքարերի (*Օկների դիսպարի*)  
թրթուրը մօտ մէկ և կէս վերջոկ մեծութեան է հաս-  
նում, մոլորագոյն է, կարմիր և կապոյտ բշտիկներով  
ծածկուած, որոնց վրայ սուր մազեր են նշմար-  
ւում: Թթուրը ձեռք վերցնելիս, աղինչի նման  
կաշի այրւածք է առաջ բերում: Սրա թիթեա-  
ները յունիս ամսին ձու են ածում ծառի բնի կեղեկ-  
տակ-գետնին բաւականին մօտ:

6) Հասարակ մեծախաբերի (Պօրքեզիա Խրիզօրհուական) թրթուրը աւելի մուլթ գոյնի է և գարշինացոյն մազերով ծածկւած, իսկ մէջքի կողմից պարզ երևում են կարմիր շերտեր։ Սրա թիթեռը իր սերմը ածում է տերեկի տակի կողմից։ Այդ սերմից օգոստոսին դուրս է գալիս մասնը թրթուր ու ամբողջ ձմեռը անց է կացնում տերեկներից շինւած բնիկներում։ Միւս գարնանը սկսում է իւր աւերումը, ուշ տելով ծառի կանաչ մասերը, ու դորանով վնասում է խնձորենուն և ուրիշ պտղատու ծառերին։

7) Ինչ վերաբերում է օդականման մետախսա-  
քերի (Գաստրօպահան Նեուստրիա) թրթուրին, ոտ  
սպիտակ գոյնի է, կողքերից գոյնզգոյն շերտերով  
զարդարւած, իսկ մարմնի վրայ քնքոյշ, երկար մա-


զեր են երևում։ Սրա թիթեռի ածած սպիտակ սերմը  
օդակի պէս դասաւորւում է ծառի մանր ճիւղերից  
շուրջ և մէկը միւսի հետ պինդ կպած են լինում։ Գար-  
նանը այդ սերմից գուրս է գալիս թրթուրը և ըս-  
կըսում է պաղատու ծառերի տերևները փչացնել։  
Բոլոր վերև յիշւած միջատներից ազատւելու



Նկար № 28. Հասարակ մետարաբեր. եղի նստած է ձակրի վրայ. որմբ բազամ է, որդերը պահած են ուստանի մեջ:


միակ միջոցն է բժշկել ծառերը փարփական կանաչով։  
Բայց դրանից, աշնանը թափւած տերեներն ու ճիւղերը հարկաւոր է հաւաքել ու այրել և, առհասարակ, պտղատու ծառերը ծառալոփից և մամուռից մաքուր պահել։ Նաև անհրաժեշտ է ծառի բունը աշնանը և գարնանը, գետնից մի արշին բարձրութեամբ,

քսել կրի, կաւի և տաւարի թարմ աղբի խառնուր-  
դով։ Կիրը հանգցնում են ջրում, այնքան, մինչև որ  
ստացվում է թանձր կաթի նման մի հեղուկ։



Նկար № 29. Օղականման մետաքսաֆերի բրուռը:

8) Յուղտի թիրեն (*պուերէն* ճօյրաշնուց, *լատիներէն* Pieris erataegis.): Դա խոշոր, սպիտակ թիթեռ է, որի թրթուրը իւր կենցաղով շատ նմանում է հասարակ մետախսաքերին (Պօրտէզիա Խրիզորհօեա): Վնասում է խնձորենուն և ուրիշ այլ պատճեններին, ուտելով աերեն ու կոկոնները: Ին-



Նկար № 30: Օդականիման մետաքսաբէր թիթեռը և ձիւղը,  
որի վրայ նա օդականեւ ճւեր է ածել:

Քը թրթուրը համսում է մօտ մէկ վերջօկ մէծութեան։  
մէջքը սև գոյնի է, մի քանի դեղին շերտերով նախ-  
շուած, իսկ կողքերը մոխրագոյն։

Բժշկում է, ինչպէս և մնացեալ միջատները, փարիզեան կանաչով:

9) Տերեւակեր (*ոռուերէն՝* ուլուղից) կամ լիստօնձ, լատ. *Eriocampa adumbrata*): Այդ միջատի թրթուրը, ուտելով տերեկի քնքոյշ մասերը, թողնում է միայն երակները ու տակի կաշին. այնպէս որ ծառի կանոնաւոր սնունդ ստանալը խանգարւում է: Ինքը թրթուրը կանաչ-դեղին գոյնի է, սև, կպչուն-լորձնոտ հիւթով ծածկուած և թանաք յիշեցնող հոտ ունի:



Նկար № 31: Տերեւակեր. որդերը ուտում են տերեւի մեջը. նրա թիրեւոց:

Ապրում է ինչպէս կերասի, նոյնպէս և ուրիշ պտղատու ծառերի վրայ:

Կուելու միջոցներ: Այդ միջատը ոչնչացնելու համար հարկաւոր է ծառերը փարիզեան կանաչով, կամ նաւթի էմուլսիայիով սրսկել: Իսկ այդ միջատի տարածման առաջն առնելու համար անհրաժեշտ է նաև ծառի շուրջը գարնանը և աշնանը հողը որքան կտրելի է խորը փորել:

10) Բալենու ճանն (*ոռուերէն՝* վишневая муха, լատիներէն՝ *Spirographa cerasi* L.)

Մայիս կամ յունիս ամսին այդ միջատը ձու է ածում նոր համուղ բալի վրայ: Զուից զուրս եկած բաց դեղնագոյն մանր որդը մտնում է պտուղի մէջ և նրանում ապրում, որով և բալը որդնոտ է դարձնում:

Կուելու միջոցներ: Միջատը ձմեռը անց է կացնում հողի տակ. ուրեմն այդ միջատի հետ կուելու համար նախ և առաջ հարկաւոր է ամենայն տարի ծառի շուրջը գտնուած հողը լաւ փորել. յետոյ, աշնանը հաւաքել տակը թափւած որդնոտ պտուղը և ոչնչացնել: Բացի դրանից հարկաւոր է ծառը իր ժամանակին փարիզեան կանաչով սրսկել:

11) Սալորի որդ (*ոռուերէն՝* сливовая плодожорка, լատիներէն՝ *Grapholita funebrana* Fr.): Յուլիս ամսին այդ թիթեռը իւր սերմը ածում է գեռչնասած սալորի կամ ծիրանի վրայ: Այդ սերմից դուրս եկած կարմրագոյն որդը մտնում է պտղի ներսը և ծծում նրա հիւթը: Այդ պատճառաւ պտուղը, ինչպէս հարկն է, չհամելով, թափւում է ծառից: Աշնանը միջատը բօժօժի է փոխւում և, ձմեռը անցկացնելով այդ դրութեան մէջ, գարնանը նոր սերունդ է տալիս և ոչնչացնում պտուղը: Այս որդը բժշկում են, ինչպէս կարպօկապսա պօմօնելա ճիճուն: (Տես եր. 39):

12) Խնձորենու լուինը (*ոռուերէն՝* яблонная тля, լատին. *Aphis malii* Fabr.): Նոյն տեսակին է պատկանում բալենու լուինը (*ոռու, վишневая тля, լատ. Aphis cerasi* Fabr.): Դրանք մանր, տարբեր գոյնի միջատներ են. զօրօրինակ, աֆիս մալին կանաչն է, իսկ աֆիս ցերազի՝ սև:

Այս օջիլի նման միջատներ ամառուայ սկզբներում մեծ քանակութեամբ նստուում են մանր ճիւղերի վրայ, նոյնպէս և տերեւների տակի կողմից ու նրանցից ծծում են հիւթը: Դրա հետեւանքը լինում է այն, որ տերեկը սկսում է ծալել ու ոլորել, կուչ դալ և ապա չորանալ:

Միջատը յունիս ամսին թևեր է ստանում ու

թողնում ծառը, իսկ աշնանը նորից նստում է ու ձռւ ածում ճիւղերի ճեղքերի մէջ:

Կուելու միջոցներ: Այդ լուիճը ոչնչացնելու համար հարկաւոր է աշնանը ծառի բունը քսել ջրա-




Նկար № 32. Խճնորենու լուիճը (ոչիլլ) պատում է ողջ ճիւղը ոչիներով, կոչ է ածում եւ ոլորում է տերեները:

Խառն կիրով (Տես Պաստրօպախա նեռւստրիա), իսկ գարնանը՝ տերեի բացուելու ժամանակ, ծառը պէտք է սրսկել նաւթի էմուլսիայով կամ մախորկա ծխա-

խոսից պատրաստած էկստրակտով, (Պատակъ-ի) մէկ ֆունտը բաց արած եօթ վեդրօ ջրում:

13) Տանձենու լու (ոռւսերէն՝ *Psylla pyris* L.) կայ նաև խճնութենու լուն (ոռւսերէն՝ *Psylla mali* Forst): Երկումն էլ շատ մանր միջատներ են, որոնք գարնանը դուրս են գալիս ծառի ճեղքերից և սկսում են ճիւղերի և տե-



րեների ճիւթը ծծել: Միկնոյն ժամանակ այդ միջատը արտադրում է մեղրի նման թանձր, կպչուն ճեղուկ: Հետեւ անքը լինում է այն, որ ծանար № 33. Տանձենու լու ու մեծ մասամբ զրկուում է (տիգ) A. մեծը. B. հարստերիներից և կանաչ ճիւղենակը (Երկուսն էլ խիստ մեծացրած):

Խնձորենու լուի (պսիլա մալի) միջատը զանազանուում է տանձենու լուից (պսիլա պիրիից) միայն արտաքինով, այն է, առաջինի գոյնը բաց-կանաչ է, իսկ երկրորդի՝ մոխրագոյն է:

Կուելու միջոցներ: Միջատը ոչնչացնելու համար հարկաւոր է տերեների նոր բացուելու ժամանակ ծառը սրսկել նաւթի էմուլսիայով. միայն պէտք է աշխատել, որ դեղը կպչի միջատի մարմին, որովհետեւ նա այդ պէտքում անմիջապէս ազդում է և սատկացնում: Վարակւած տերեները ժամանակով ծածկուում են սունկային ճիւանդութիւնով և սեանում:

14) Արխնալի լուին (ոռւսերէն՝ *Schizoneura Lanigera* Hausm.): Երկումն է մեծ քանակութեամբ խընձորենու, տանձենու և տերեների վրայ, որոնց ճիւ-

դերի և արմատների հիւթն է ծծում: Այդ ոջիլանման փոքրիկ միջատը շատ արագ է բազմանում և ծառի ճիւղերը ծածկում բամբակի նման սպիտակ բորբոսանքով: Բորբոսանքը, մատների մէջ տրորելով, ա-



Նկար 34: Արխանալի լուիճ (ոջիլ). պատում է ողջ ձիւղն ու տերենները ոջիլներով, որոնք տրորերես, արեան նման կարմիր գոյն են տալիս:

բիւնի պէս կարմիր հիւթ է՝ արտադրում:

Արխանալի լուիճի (Շիցոննեուրա լանիգերա) միջատը, իրա ծծելով, ճիւղերի և արմատների վրայ ուռուցքներ է գոյացնում և այդպիսով ծառի կեղերը

վնասում: Հետևանքը լինում է այն, որ ծառը սկսում է նւազել, իսկ մատաղ տունկերը մինչև անգամ բուրովին չորանում են:

Այդ միջատը կովկասում շատ է տարածուած և մեծ վնասներ է բերում այդիներին:

Կուելու միջոցներ: Եթէ ծառը փոքրիկ է և նոր է երկան եկել այդ ոջիլը, ամենահեշտ միջոցն է հէնց մատներով տրորել և սպանել միջատներն և, կոշտ խոզակով կեղեւը լաւ սրբելուց յետոյ, քսել կամ խոզի ճարպ, կամ ոչխարի դմակ, որը մի քանի անգամ կրրկնելուց յետոյ, վերջանում է: Մեծ ծառերը հարկաւոր է սրսկել նաւթի էմուլսիայով, իսկ արմատներ բժըշկելու համար պէտք է աշնանը ծառի տակ հողը մինչեւ արմատներ փորել և կիր ածել, իսկ գարնանը այդ կիրը լաւ հողի փոխարինել:

15) Տանձի սիլ (ռուսերէն՝ грушевый клещикъ, լատիներէն՝ Phytophtorus pisi): Խնձորենու և սերկեփիլի տերեւները ծածկում են մանր կլորածեւ դեղին կամ կարմիր ուռուցքներով, որոնք առաջ են գալիք այդ փոքրիկ, հասարակ աչքով աննկատելի միջատից: Այդ ուռուցքները ժամանակով սեւանում են և այդպիսով անպէտք դառնում ծառին սնունդ մատակարարելու գործում:

Ամեն մի բոյս իւր մնունքը ստանում է բացի արմատներից նաեւ կանաչ տերեւների միջոցաւ, որոնք մեծ պէր են կատարում մանաւանդ պտղի գոյանալու եւ զարգանալու գործում:

Կուելու միջոցներ: Այդ միջատից այդին ազատ պահելու համար հարկաւոր է վնասուած տերեւները ոչնչացնել, իսկ գարնանը, բողբոջների բայցուելուց առաջ, ծառը սրսկել նաւթի էմուլսիայիով:

**ՊՏՈՒԴՆԵՐԸ, ՏԵՐԵՒՆԵՐՆ ՈՒ ՃԻԿԵՐԸ ՎՆԱՍՈՂ  
ՄՆԿԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՐԻԹԻՒՆՆԵՐ**

Երկրորդ գլխում (տես երես 19) մենք ծանօթացանք այն սունկերի ու մակարոյծերի (պարայտ) հետ, որոնք վնասում են մեծ մասամբ ծառի արմատն ու կեղևը, այժմ տեսնենք թէ ինչ սունկեր են վնասում ծառերի պտուղները, տերեները, ջահել ճիւղերը և ընդհանրապէս ծառի քնքոյշ մասերը:

Այդ տեսակ սունկերի թիւը փոքր չէ, իսկ վընասները ահազին. շնորհիւ գրանց, շատ անգամ մենք երկար տարիների ընթացքում զրկուում ենք ոչ միայն բերքից, այլ, որ աւելի սարսափելի է, կորցնում ենք հէնց ծառը, որը, վարակւելով այս կամ այն սնկային հիւանդութիւնով, տարեց տարի նւազում է, թուլանում և վերջ ի վերջոյ չորանում ու մեռնում:


Այդ տեսակ սնկային հիւանդութիւններից զըլխաւորների հետ կծանօթանանք այստեղ, որպէս և այն միջոցների, գեղերի, որոնցով այժմ մեծ յաջողութեամբ կուում են այդ հիւանդութիւնների գէմ և զրանով փրկում ծառն ու այդին ոչ միայն կորուստից, այլ, որ զլխաւորն է, օգնում են նրա առատ պտղաբերութեանը: Այդ տեսակ հիւանդութիւններից նշանաւորներն են հետևեալները:

1) Խնձորենու բուր (ոռւսերէն՝ պարա յալօքъ, լատիներէն՝ *Fusicladicum dendriticum* Fckl). և

2) Տանձենու բուր (ոռւսերէն՝ պարա ցրցъ, լատիներէն՝ *Fusicladicum pyrinum*).

Երկուսն էլ միատեսակ հիւանդութիւններ են, միայն թէ առաջինը վնասում է խնձորենուն, իսկ Երկրորդը՝ տանձենուն:

Հիւանդութիւնը սկսում է նրանով, որ պտղի վրայ գոյանում են սև կամ դարչինի գոյնի բծեր, որոնց կենզրօնը աւելի մոյզ գոյն է ունենում, քանի թէ շուրջը: Այդ տեսակ բծերը, մեծանալով և միա-



Նկար № 35. Քոս ընկած տանձը.  
մարձրած. յ—բոսի նշանները,

Նկար № 36. Քոս վի-  
կած տանձը յունիսի  
սկզբում:

նալով մէկը միւսի հետ, վարակում են պտուղը ամբողջապէս:

Վարակւած տեղերը սկսում են ճաքճըքւել, կոշտանալ և սև կամ մոյզ մեխակի գոյնը ընդունել: Բացի զրանոից, պտուղը ստացւում է մեծ մասամբ միակողմանի, այսինքն իւր բնական ձևը փոխած,

որովհետեւ վարակւած կողմը չի կարողանում այլ ևս  
կանոնաւոր կերպով զարգանալ:

Միևնոյն ժամանակ տերենների տակի կողմից,  
մախմուրի նման, ձիթենու գոյնի բծեր են գոյանում,  
որոնք ժամանակով տեղի սեանում են: Հիւանդ տե-  
րեր չորանում և ծակուտում է, իսկ ձիւղերի վրայ  
այդ հիւանդութիւնից ճեղքեր են գոյանում:

Սնկային հիւանդութիւնների մէջ ֆուղիկլագի-  
կումը (քոսը) հաշւում է ամենավասարը, և խոնաւ  
տարիներում շատ է տարածւում մեզանում: Այդ  
հիւանդութեան հետեւանքը լինում է այն, որ պտուղը  
բոլորվին չորանում, թափուում է, կամ թէ չէ՝ այշ-  
անդակւում է և սե փոսերով ծածկւում: Լինում են  
տարիներ, որ ծառը այդ հիւանդութիւնից դիմովին  
տերեաթափ է լինում:

Շատ սակաւ է պատահում մեզ մօտ, որ խնձո-  
րի և տանձի մի քանի քնքոյշ, ամառայ տեսակները  
այդ հիւանդութիւնով վարակւած չինեն:

Քոսի (ֆուղիկլագիկումի) գէմն առնելը շատ հեշտ  
է, միայն թէ հարկաւոր է ժամանակին ծառը բժշկել:  
Ուստի անհրաժեշտ է ծառի կոկոնները բացւելուց  
առաջ, այսինքն գարնան սկզբներում, բոլոր ձիւղե-  
րը թրջել բորդոյեան հեղուկով, (տես զլսի վերջում՝  
բորդոյեան նեղուկ):

Այդ կատարւում է հասարակ մեծ վրձինով. յե-  
տոյ, նոյն հեղուկով սրսկում են ծառը՝ ծաղկելուց  
անմիջապէս յետոյ, և դրանով կարելի է բաւականա-  
նալ, եթէ ամառը անձրեային չեղաւ: Հակառակ գէպ-  
քում սրսկումները պէտք է նորից 2 կամ 3 անգամ  
կրկնել, վերջացնելով բժշկութիւնը պտղեկոյթից մի  
ամիս առաջ:

Բացի դրանից, աշնանը անհրաժեշտ է բոլոր  
չորացած ձիւղերը, վարակւած պտուղը և տերենները  
հաւաքել ու ոչնչացնել, որովհետեւ նրանց մէջ մնում  
են սունկի բեղմնիկներ (սերմերը), որոնք դիմանա-  
լով ձմեռուայ ցրտերին, զարնանը նորից հիւանդու-  
թիւն են առաջ բերում:

3) Խնձորենու ժանգը (փառումն) (ոռուերէն յե-  
лонная ржавчина, լատ.<sup>3</sup> Gymnosporangium tre-  
melloides Hart.)

4) Տանձենու ժանգը (ոռուերէն՝ گрушевая  
ржавчина, լատ.<sup>4</sup> Gymnosporangium Sabinae):

5) Սերկելիի ժանգը (ոռուերէն՝ айвовая ржав-  
чина. լատ.<sup>5</sup> Gymnospr. confusum):

Այդ երեք սնկային հիւանդութիւնները արտա-  
յայտում են հետեւեալ կերպով:

Տերենների տակի կողմից նշմարւում են նարին-  
ջի գոյնի խալեր, լի սունկի բեղմնիկներով (մանր,  
միայն խոշորացոյցով նշմարելի սերմերով): Նոյնպի-  
սի խալեր գոյանում են պտղի վրայ:


Տանձենու եւ սերկելիու ժանգի բեղմնիկները  
ձմեռը կարող են միայն ցրդու թիվի վրայ անց-  
կացնել: Այդ թփի վրայ գարնան սկզբներում գոյա-  
նում են նարնջագոյն, երկարած գոնդողանման  
մարմնիկներ, որոնց սերմերով տանձի և սերկելի  
ծառերը նորից վարակում են և ժանդ հիւանդու-  
թիւնը առաջ բերում:

Իսկ խնձորենու ժանգը կարող է իւր գոյութիւ-  
նը պահպանել (կոծախուրի, զարիշք) զինու թիվի վրայ:  
Զմեռը անցկացնելով գիճու վրայ, զարնանը նոյնպի-  
սի նարնջագոյն մարմնիկներ է գոյացնում իւր բեղ-  
մնիկներից, ինչպէս տանձենու ժանգը ցրդու թփի

ჭავა, ს აუთ აյთ ჩემანდიცმენი ამაռავ გრ-  
ჭავყომ ნიღებ ანენომ է წნაპრენო ქრავ:

Ժամանակը մի քանի տեղերում մեծ վիճակներ է հասցնում պաղատու ծառերին, տերևաթափ անելով նրանց:

Կուելու միջոցները: Ինչպէս տեսանք, առանց  
զի՞ճու կամ ցրդու քողերի այդ հիւանդութիւնը չէ  
կարող գոյութիւն ունենալ: Ուրեմն պաղատու ծա-  
ռեքը, այդ չարկիքից ազատելու համար, հարկաւոր է



Նկար Ա 37: Բորբոսնած խնձորի տեսքն ու վարակումը:

այլու մօտերքում գտնւող գիճու և ցրդու թվերը ու չնչացնել և ապա ամառայ ընթացքում պաղատու ծառերը սրակել բորդովեան հեղուկով:


6) Պտղի բորբուն (ռուսերէն՝ плѣсень плодовъ, լատին՝ monilia fructigena Pers.) Այս սունկը երեսն է գալիս համարեա բոլոր պաղատու ծառերի վրայ: Հիւանդութիւնը արտայայտում է հետեւալ կերպով:

Պաղի վրայ երևում են դարձնագոյն բժեր, ու

ըոնք, աստիճանաբար մեծանալով, վարակում են պը-  
տուղը: Յետոյ այդ վնասած տեղերի վրայ գոյա-  
նում են մոխրագոյն կամ դեղին գոյնի կլորածե-  
մարմնիկներ, որոնք դասաւորւում են համակենդրօն  
շրջաններով:

Կուեկու միջոցները։ Փասած սլառուղը հարկաւոր է անմիջապէս հաւաքել և այլրել, իսկ գարնանը և աշնանը ծառերը երկու անգամ սրսկել բարդոյեան նեղուկով։

7) Սպիտակ բծեր սահմանութեան տերեւների վրայ, (*ռուս-սերէն*, Եղանակ բելայ պատճեանութեան գրանք, \* լատի-



Նկար № 38. Բորբոսնած ու վարակված սալորի տէսքը


Ներէն՝ Leptosphaeria Lucilla): Այս հիւանսգութիւնը սկսում է նրանով, որ տերեների վրայ մեծ քանակութեամբ մոխրագոյն, կլորաձև բծեր են զոյանում, որոնք շրջապատած են լինում մուգ դարչնագոյն եղբով։ Այդ բծերի վրայ պարզ նշմարելի են լինում

<sup>\*)</sup> Уեզ թւում է ող սա Leptosphaeria Lucilla-ն է: Ծան. Խմբ.

մանր, սև ուռուցքներ, որոնք այդ սունկի պտղակալներն են:

Վնասած տերևները չորանում, թափուում են, խակ պտուղը վաղաժամ թառամում:

Կուելու միջոցները: Ինչպէս և բոլոր սունկային հիւանդութիւններինը, սա ևս բժշկում է բորդոյեան




Նկար № 39. Տանձենու բծաւոր տերեւի հիւանդութիւնը:

հեղուկով սրսկելով:

8) Բծացաւ կորիզաւոր պտուղների տերեւների (*ոռութերէն՝* пягнистость листьевъ: черешни, вишни, персика, абрикоса, миндаля, *լատիներէն՝* Clasterosporium amygdalaeum Sacc.) Սոկզբում տերևների վրայ երևում են դարչնագոյն կորածն բծեր,

շրջապատւած տւելի մուգ գոյնի օղակով։ Ժամանակի ընթացքում վնասած տեղերը չորանում են և դուրս թափուում, այնպէս որ տերեւ ծակոտում է։ Միջոցներ՝ Բժշկում է, ինչպէս վերեսում յիշ-



Նկար № 40. Սալորի հիւանդութիւնը «երսօասրոս» հիւանդութիւնից. պտուղը ճյորտում է ու չի զարգանում։

ւած հիւանդութիւնը (տես եր. 61), այսինքն բորդոյեան հեղուկով։

9) Սալորի այլադակումն (ոռութերէն՝ կարմаш- կա сливы или сумочная болезнь, *լատիներէն՝* Exoascus pruni, Eusekel.): Սալորենու ծաղկելուց յե-

անմիջապէս, վարակւած պտուղը բնական կերպով չէ զարգանում, այլ այլանդակւում է և ընդունում պարկի ձև: Հիւանդ պտուղը թէկ, բնականի հետ համեմատած, աւելի խոշոր է երկում, բայց միշտ փուչ է լինում:

Սկզբում պտուղը լինելով դեղին գոյնի, յետոյ զարչինի կամ աւելի մուգ գոյների է փոխում և մեծ մասամբ թափւում:

Կուելու միջոցներ: Հարկաւոր է մեասւած պլատուղը պոկոտել ծառի վրայից և, բացի զրանից, նաև երկու անգամ սրսկել բորդոյեան նեղուկով՝ սալորենու ծաղկելուց առաջ և վարակւած պտղի գոյն փոխելու ժամանակամիջոցին:

Բայց, որովհետեւ միենոյն հիւանդութիւնը պատահում է և թխենու (черемуха) վրայ, այդ պատճառու սալորենու մօտերքում այդ ծառը չ'պէտք է պահել:

10) Գեղձի սերենիերի կուչ զալը, (ռուսերէն՝ курчавость листвьевъ персика, լատիներէն՝ Eucosmus deformans Euck.) Սա արտայայտում է նրանով, որ տերեների վրայ ուռուցքներ են գոյանում, իսկ տերենի հակառակ կողմը փոսերով է ծածկւում: Այդ պատճառով էլ տերեները կուչ են զալիս, կամ, ինչպէս ասում են, խուճուճում են: Միենոյն ժամանակ տերենի գոյնը փոխում է դեղնի կամ կարմրի և հեշտութեամբ թափւում:

Կուելու միջոցներ: Այդ հիւանդութեան դէմքորդոյեան հեղուկը լաւ է օգնում: Հարկաւոր է ծառը սրսկել կոկոների բացւելուց առաջ, իսկ ամառուաց ընթացքում նոյն բանը կրկնել երկու կամ երեք ան-

գամ: Բացի զրանից, ինչպէս միշտ, անհրաժեշտ է թափւած տերել հաւաքել և այլել\*):

Մեզ մնում է յիշել էլի մէկ մակաբոյծ բոյսը, որ ամենից շատ նկատում է հին ծառերի վրայ, դա է՝

11) Սպիտակ նազումը (Ճուշը), (ռուսերէն՝ Омелла, լատիներէն՝ Viskum albus): Լինելով մակաբոյծ բոյս, այսինքն ուրիշ ծառից սնունդ ստացող, ապարում է մեծ մասամբ խնձորենու և տանձենու ճիւղերի վրայ, որոնցից ծծում է հիւթը, ուժասալառ անում և անգամ բոլորովին չորացնում:

Օմէլան բաւականի խոշոր բոյս է, որի եղջիւրանման ճիւղերը ջուխտակ տերեներով են զարդարուած: Պտուղը սպիտակ գոյն ունի և թուչունները սիրով ուտում են նրան և այդպիսով սերմը մէկ ծառից միւս անցկացնում և վարակում այդին:

Կուելու միջոցներ: Օմէլայից պատւելու համար հարկաւոր է այն ճիւղերը, որոնց վրայ երեսում է նա, ամբողջովին կտրել, որովհետեւ այդպիսի ճիւղերի կերպի տակ, անգամ Օմէլայի թփիկը հեռացնելուց յե-

\*) Խորհուրդ է տալիս նաև ծառի շուրջը՝ 5—6 վերշոկ լայնութեամբ և նոյնքան խորութեամբ, առու փուրել (ընից մի արշին հեռու) և առւի մէջ 10—15 գունտ կիր շաղ տակ, յետոյ առուն ծածկել:

Ծան. Խմբ.

տոյ, մնում են այնուամենայնիւ նրա արմատները, որոնք կարող են նորից ծլել<sup>\*)</sup>):

Ընդհանրապէս պէտք է նկատել, որ պտղատու ծառերը զանազան հիւանդութիւններից ազատ պահելու համար հարկաւոր է այգին միշտ մաքուր պահել, այսինքն՝ իւր ժամանակին հողը փորել, խոսք հեռացնել և ծառի ճիւղերը լոռից և մամուռից մաքրել:

### ԴԵՂԵՐԸ ԵՒ ՆՄԱՆՑ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Այն գեղերը, որով ոչնչացնում ենք մակաբոյծները Եւրոպական անունով կոչւում են ֆունգիսիլնիւր (Փունգուս՝ լատիներէն նշանակում է սունկ):

Ինչպէս տեսանք, այդ բոլոր գեղերի գործածութիւնը կայանում է սրսկման մէջ:

Փունգիսիլների մէջ ամենից գործածականը բորդոյեան հեղուկն է (որի պատրաստը՝ փոշանմանը կոչւում է «Եկլէր»):

1) Բորդոյեան հեղուկը (бордосская жидкость) պատրաստում է հետեւել կերպով:

Վերցնում են կէս վեղրօ տաքացրած ջուր փայ-

\*) Վերջին ժամանակներս պրոֆեսօր Հեյնրիխէրը, յենելով այն բանի վրայ, որ օմելան լոյս սիրող պարագիտէ, իսկ շաքում մեռնում է, փորձեր արին կարատելու օմելայի ճիւղերն, իսկ այն ծառի մնացած ճրւղն, որի վերայ բուսած էր Օմէլան, ծածկեցին տիլոյով՝ թրջած՝ կարբոլինէռում հեղուկի 10% էմուլսիայով, որի առաջացրած մթութիւնից Օմէլան ինքն իրեն խեղդւում է իր արմատներով։ Ծանօթ. Խմբ.

տեայ կամ կաւէ ամանով և նրա մէջ հալեցնում 4 ֆունտ պղնձի արջասպ<sup>\*)</sup>): Արջասպը աւելի լաւ է առաջուց թակել, որովհետև մամրացրածը աւելի շուտ է հալւում։

Մի ուրիշ ամանի մէջ ածում են 2<sup>1/2</sup>—3 ֆունտ նոր այրած կիր և, աւելացնելով սառ ջուր, հանգցնում (ստացւում է մարած կիր): Յետոյ հանգցրած, ալիւրի նման դարձրած կիրը խառնում են կէս վեղրօ ջրի հետ և ստանում կաթի նման մի հեղուկ (կրաջուր, известковое МОЛОКО):

Մի երրորդ մեծ ամանով (ամենայարմարն է կիսատակառը) վերցնում են ինը վեղրօ մաքուր ջուր և նրա մէջ ածում արդէն հալուած պղնձի արջասպը և փայտով լաւ խառնում։

Յետոյ, աստիճանաբար, արջասպի հեղուկի վերայ աւելացնում են կրաջուր և նոյնպէս անդադար խառնում, մինչև կը ստացուի բաց կապտագոյն մի հեղուկ, որ և կոչւում է «բորդօյեան»։

Կիրը ածում են արջասպից յետոյ, որովհետև հակառակ գէպքում գեղը փոխում է իր յատկութիւնը։

Բացի գորանից, հարկաւոր է կրաջուրը մաղի միջով անցկացնել, որպէս զի չհալուած մասերը չը խանգարեն գեղի մաքրութեանը և սրկսելի ապարատի ծայրը չլցուի կրի կտորներով։

Իմանալու համար, թէ արդեօք գեղը ուղիղ է պատրաստուած, թէ ոչ, հարկաւոր է գանակի կամ կացնի ծայրը թրջել այդ հեղուկով. եթէ մետաղը

\*) Պղնձի արջասպը ոռւսերէն ասում են մեծնայն կупорօսъ, թուրքերէն՝ Գեօդ-դաշ (կապոյտ քար). Ծանօթ. Խմբ.

կարմրի, ուրեմն պէտք է էլի աւելացնել կիր, մինչև որ մետաղի գոյնը այլ ևս չը փոխվի:

Հակառակ դէպքում, սրսկելու (բժշկելու) ժամանակ ծառի տերեները և պտուղը կարող են վնասուել, ինչպէս ասում են՝ «այրուել»\*):

Դալով միջամաներին ոչնչացնող դեղերին, դրանք կոչւում են ինսեկտիներ (լատիներէն ինսեկտու բառից. նշանակում է միջատ): Ինսեկտիներից գլխաւորի՝ փարիզեան կամ շվեյնֆուրտեան կանաչի գործադրութեան հետ մենք արդէն ծանօթացանք, երբ խօսում էինք ինձորի թրթուոի դէմ կուելու միջոցների մասին:

Մի այլ նոյնպէս ներգործող դեղ է նաւրի եւ բուրունի էմուլսիան:

2) Նաւրի էմուլսիան (կերосиновая эмульсия) պատրաստելու համար վերցնում են քառորդ փունտ հասարակ սապոն, մանր կտրատում եւ հալում են քառորդ վեդրօ տաքացրած ջրի մէջ. յետոյ դրան

\*) Որովհետև բորդոյեան հեղուկը պատրաստելիս պահանջում է լաւ հմտութիւն, ուստի վերջին ժամանակները հնարևած է նոյն նպատակի համար Eclair (էկլէր) կոչւած փոշին, որը լիովին փոխարինում է բորդոյեան հեղուկին, մինոյն ժամանակ պատրաստելիս չենք կորցնում աւելորդ ժամանակ. Այդ փոշին ծախտում է Եղբ. Փրիդոնեաների մօտ 5 քնտանոց ծրարներում. ամեն մէկ ծրարը պիտի լուծեի 10 վեդրոյ ջրում և ամեն վեճրոյին աւելցնել Յ մսխալ պարիզեան կանաչ, գնի տարբերութիւնը շատ չնշին է և հետեանքներն աւելի արդիւնաւէտ: Ծրարը, 10 վեճրոյ ջրի համար, արժէ 1 լ. 20 կոպ.:

աւելացնում են 10 փունտ նաւթ եւ ամանը պահելով մարտող կրակի վրայ, որ հեղուկը չը սառչի, երկար (մօտ 20 րոպէ) խառնում են մետաղեայ ձողերից շինած աւելով, մինչեւ որ կը ստացւի թանձր թանի նման մի հեղուկ: Ծառեր բժշկելու համար այդպէս պատրաստուած դեղը պէտք է 8 վեդրօ ջրի հետ խառնել եւ յետոյ միայն բանեցնել, աշխատելով սրսկել ուղղակի միջատի բները:

3) Թուրունի էխուրակ՝ Պատակի: Սա ջրի մէջ հեշտութեամբ լուծւող, բաւականին ազդեցիկ թոյն է, որ ծախտում է դեղաւաների պահեստներում:

Ութ փունտ էքստրակտը լուծում են մի ամանում 20 վեդրօ հասարակ ջրի մէջ (կամ 20 մսխալը մի վեդրօ ջրի) եւ, ածելով սրսկիչների մէջ, սրսկում են ծտուերի այն տեղերը, ուր գտնւում են միջատների բները: Սա ոչնչացնում է տերեւառջիներին, ուրոնք կուչ են ածում տերեւները: Սա լաւ է նաև կազմմի, ձմերուկի բանջարանոցների մէջ եղած որպերը բժշկելու համար:

### 5) ԿՐԾՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Պարտիզի և պտղատու ծառերի թշնամիների թըլին են պատկանում, բացի միջատներից ու մնկային հիւանդութիւններից, նաև մի շարք ուրիշ կենդանիներ, որոնց տւած վնասը երբեմն այնքան մեծ է, որ կարիք է լինում դրանց դէմ կուելու և դրանց ոչընչացնելու համար լուրջ միջոցների դիմել:

Այդ տեսակ վնասակար կենդանիների թւին են պատկանում.

1) Մկները:

Եթէ ծառի բնի կեղելը չորս կողմից կրծել է մուկը—այդ դէպքում կրծած տեղից բարձր ծառի ողջ մասը չորանում է, իսկ եթէ նա կրծել է կեղելի մի կողմը միայն, իսկ միւս կողմը անվասա է, այդ դէպքում ծառը կապրի, հարկաւոր է միայն կրծած տեղը քեզ տաւարի աղը (թրիք)` խառնած կէս ու կէս կաւի հետ և ապա ճիլոպով փաթաթել ծառի այդ մասը:

Կուելու միջոցներ:

Վերջին ժամանակներս գտնւեց մկներին ոչընչացնելու մի այլ միջոց—այն է մկնային տիֆ պատւասելով։ Բաւական է բռնել մի մուկ, նրա մարմնի մէջ սրսկել յատուկ եղանակով պատւաստած տիֆի շիջուկ և յետոյ, երբ այդ մուկը բաց էք թողնում դաշտում, նա տիֆով վարակում է բազմաթիւ մկների, իսկ սրանք ուրիշների և այսպիսով կոտորում են բաւական մեծ թւով։

Երկրագործութեան մինստրութեան բակտերիօլոգիական լաբորատորիան ցանկացողներին ուղարկում է մկան տիֆի շիջուկ. դրա համար հարկաւոր է դիմել հետևեալ հասցէով՝ Օ. Պետերբուրգ. Եակ-териологическую Лабораторию Министерства Земледѣлія.

2) Նապաստակ: Այս կրծողը մկներից պակաս չի վնասում ծառերին. նա ևս աշնանը, մանաւանդ ձմեռը մտնում է այգի և իր սուր ատամներով կրծում է պտղատու ծառերի կեղեւը եւ չորացնում նրանց։

Կուելու միջոցներ: Նապաստակների վնասները ծառերի վրայ նոյն կերպ են, ինչ և մկներինը. եթէ նա կրծել է ծառի կեղեւը չորս կողմից եւ մերկացը րել է օղակաձեւ, այդ դէպքում ծառի վերին մասը չորանում է, իսկ եթէ կեղելի մի մասը աղատ է մընացել, ծառը կարելի է փրկել՝ քսելով նրան տաւարի աղը կաւի հետ խառնած, փաթաթելով քսած տեղը: Նապաստակների դէմ կուելու արհեստական միջոցներից պէտք է յիշել փշաւոր մաւթուլի ցանկապատերը, որոնց միջով նապաստակները դժւարութեամբ են անցնում, բայց աւելի լաւ է, եթէ ծառի բնի չորս կողմը, գետնից մի կէս արշին բարձր շինել փշատերև բոյմերի ցանկ, որով ամեն մի ծառ պաշտպանւած կըլինի եւ նապաստակի դունչն ու ատամները չեն կարող մանել վշերի մէջ և ծառը կփրկվի։

Նապաստակների դէմ լաւ է այգում պահել գամփը և այլ շներ (բարակներ—թաղիներ). սրանք հալածում են նրանց և նապաստակի աչքը վախելով, այլ ևս այգուն մօտ չէ գալիս։

Կան այգին վնասող մի քանի ուրիշ կենդանիներ էլ, բայց նրանց վնասը մեծ չէ, ուստի և յատկապէս կանգ առնել դրանց վրայ, չարժի։

6) ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Մինչեւ այժմ մենք ծանօթացանք մեր պտղատու պարտէղներին եւ ծառերին վնասող միջատների եւ հիւանդութիւնների հետ, որոնց դէմ կուելու համար առաջարկեցինք մի շարք միջոցներ։

Որքան և մեր առաջարկած միջոցները փորձւած են և ազդու, բայց մենք հազիւ թէ կարողանայինք մեր այգիները փրկել այդ վնասողներից, եթէ բնութեան մէջ չունենայինք մենք այնպիսի բարեկամներ, օգնականներ, որոնք գիշեր եւ ցերեկ անդադար, հազարաւորներով, կոխւ են մղում վնասակար միջատների դէմ, միլիոնաւորներով ոչնչացնում են և փրկում մեր ծառերը կորսափց:

Մեր այդ բարեկամներն են մի շարք ուրիշ տեսակի միջատներ եւ թուչուններ:

### ՕԳՏԱՀԵՑ ՄԻՋԱՏՆԵՐ

Դրանց թւին են պատկանում կարծրաբել անուն կրող միջատները, որոնց մենք սովորաբար ասում ենք բգէզներ: Սրանց մէջ առաջին տեղն է բոնում ցատկող բգէզը (ոռուսերէն՝ скакунъ, лягушка-речка՝ Cicindella campestris): Սա շատ շարժուն և գեղեցիկ մի բգէզ է, որ վազում է այգու ճանապարհների վրայով և անդադար որսում է այս կամ այն միջատին, բոնում է իր ծնուներով, սպանում և զնում է մի նոր որսի ետևից:

Յատկող բգէզների տեսակները 800-ից անց են և ապրում են մեծ մասամբ աւագու տեղերում. աւագի մէջ ծու է ածում և, բգէզ դառնալով, ամեն մէկը օրական մի քանի հարիւր ճիճուներ է սատկեցնում:

Նոյնանման բգէզներիցն են՝ հատիկաւոր բգէզը, (зернистая жукалица), ուկերեւ բգէզը (красоткаль – Calosoma sycophanta), որոնք բարձրանում են ծառերի վրայ և, բոնելով ճիճուներ ու որդեր,

անխնայ ուտում և սպանում են, մանաւանդ գիշերները: Դրանց տեսակներն էլ մի քանի հազարների են հասնում և մեր պտղատու ծառերի ամենաօգտաւետ բարեկամներիցն են:

Փափկաթիւներից յիշատակելու են՝ Լուսատիկը (ոռուսերէն СВЕТЛЯКИ, լատ. Lampyrus splendidula): Դրանք այն միջատներն են, որ գիշերները հեռակց փայլում են իրենց ֆոսֆորային լուսով և հիացնում են մեզ: Սրանք էլ մեր բարեկամներիցն են և մեծ քամակութեամբ որդեր են ոչնչացնում:

Զատիկ: (Խուսերէն՝ Божья коровка): Սխալած չենք լինի, եթէ զատիկներին մեր պարտէզների ամենաօգտաւետ միջատների թւին զատենք:

Զատիկներին բոլորն էլ ճանաչում են նրանց կարմիր գոյն թևերով, որոնց վրայ կան վեց հատ սև սև կէտեր, իսկ մի քանի տեսակների վրայ մի զոյգ միայն:

Սրանց որդերը ապրում են տերենների վրայ գանւած ոջիններ ուտելով, և այդ կողմից բաւական ագան են. փորձել են դրա մի հատը դնել բաժակի մէջ, ուր ածել են 250 հատ տերենաջիլ և տաս ժամայ մէջ զատիկի մի որդը կերել է բոլորին \*):

Ճպուններ (ոռուսերէն՝ наездники, լատ. Inchnepneumonidae): Սրանք թաղանթաթե միջատներ են զանազան մեծութեամբ՝ սկսած կէտանմաններից մինչեւ կէս վերշոկաչափերը: Մարմինը երկարածէ, կրէտների նման: Սրանց ամենավտանգաւոր մասը ամուր ու սուր ձւատարն է, որով նրանք ծակում են միջատին, որպէսզի նրա մէջ դնենց իրենց ձւերը:

\*) Տես „Рудзкій“ Вредные и полезные насекомые плодового сада. Կրես 68.

Ճպուռներից իւրաքանչիւրը ունի իր սիրելի միջատը, որի հաշւին և ապրում են՝ որպէս նրանց մակաբոյծներ (պարագիտներ): Դա կատարում է այսպէս. ընտրելով իրենց սիրելի միջատին, ճպուռը ճարպիկ կերպով յարձակում է իր որսի վրայ, ծակծում է նրա մարմինը՝ նրա մէջ դնում է իր ձուն (մեծերը՝ մէկ, իսկ մանրները՝ շատ): Վիրաւորւած միջատը աշխատում է պաշտպանել, խփում է իր մարմնով, կուչ դալիս, ոլորւում, բայց դա չի օգնում:

Մի քանի ժամանակից յետոյ, այն որդը, որի մէջ ձու է ածել ճպուռը, կոկոմ է հիւսում և երբեմն կոկոնի միջից դուրս է գալիս ճպուռի որդը, փոխանակ թեթեսի: Դա նշան է որ ճիճուն սատկել է կամ նրան կերել է ճպուռի որդը:


Այսպիսով ահա ճպուռները իրենց ապրելու ու բազմանալու այս եղանակով ոչնչացնում են անթիւ այլ միջատներ, որով և փրկում են մեր պարտէզները միջատների արշաւանքից:

Ահա թէ ինչու, փոխանակ ճպուռներին ոչնչացնելու, պէտք է ամեն կերպ օգնել նրանց բազմանալուն: Բացի յիշածս միջատներից, մենք ունենք նաև բազմաթիւ ճանճեր, որդեր, որոնք օր ու դիշեր, ընկած այս կամ այն վնասակար որդի, ճիճուի, ոջիլի, թիթեսի ետևից, բռնում են նրանց, լափում դրանց ձւերը, խեղգում, սատկեցնում կամ վերջապէս հէնց զրանցով էլ կերակրում են, որով և մեր դաշնակիցներն են դառնում՝ դրանց դէմ կուելու ժամանակ: Մարդին մնում է միայն ճանաչել՝ որն է այդքան միջատներից վնասակարը և որը օգտակարը, որ դրժար չէ, եթէ միայն մենք ուշադրութիւն դարձնենք,

հետևենք, ժողովենք ու քննութեան նիւթ դարձնենք դրանց:

### ՕԳՏԱԿԵՏ ԿԵՆԴԱԼԻՆԵՐ ԵՒ ԹՈՉՈՒԽՆԵՐ

Ոչ պակաս օգուտ են տալիս մեղ մի շաբք կաթնասուն կենդանիներ, ինչպէս օրինակ խլուրդը և մանաւանդ՝ քոչունները:



Նկար № 41. Արհեստական տնակ քոչունների համար:

Սրանց մէջ առաջին տեղն են բռնում բոլոր երգող քոչունները, ծիծեռնակը, սարեկը, հոպհոպը, ծտերը, որոնք իրենց ճուտերին կերակրում են մեծ մասամբ թիթեսներով, զեռուններով, միջատներով ու դրանց ձւերով:

Ահա հէնց դրա համար էլ ամեն մի այգետէր պարտական է առանձին խնամք տանել, որ իր պարտիզում ապրեն, որչափ կարելի է շատ թւով, այդ տեսակ թոշուններ՝ փոխանակ նրանց ոչնչացնելու:

Թուշուններին զրաւելու համար կարելի է խորհուրդ տալ պարտէզներում շինել բներ, մանաւանդ սարեկների համար (ժըռի դուշ), կախելով ծառերից փայտեայ հասարակ բներ կամ յատկապէս այդ

Նպատակի համար շինել տալ տախտակից քառանկիւնի, վեցանկիւնի բներ, ուր թռչունները կարողանային տեղ ունենալ ճուտեր հանելու համար:

Մի ուրիշ միջոցն էլ այն է, որ աշխատելու է ձմեռը, երբ թռչունները կերակուր չեն կարողանում գտնել ցրտի կամ ձեան պատճառով, կերակրել դրանց զանազան հունգերով, կուտով, սերմերով:

Այսպիսի խնամքի հետևանքը լինում է այն, որ թռչունների շատ տեսակներ ձմեռը չեն չունեն ուրիշ երկիրներ, այլ շարունակում են մնալ մեզ մօտ, դառնում են մեր այգու բնակիչը և իրենց ճուտերով ահագին օգուտ են տալիս մեզ՝ վնասակար միջատների հետ կուելու գործում:

Ճիշտ է, կան թռչուններ, ինչպէս հէնց սարեկն ու մեր ճնճղուկները, որոնք կացահարում են պտուղները, բայց այդ վնասը, համեմատած նրանց տւած օգուտի հետ, այնքան չնշին է, որ հալածել կամ սպանել սրանց դրա համար—անմտութիւն է:

### 7) Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Աւարտելով մեր այս գիրքը, անհրաժեշտ ենք համարում շեշտել այն կանոնները, որ պէտք է ամեն մի պարտիզատէր ունենայ աչքի առաջ և կատարի, եթէ ցանկանում է պարտէզը դարձնել եկամուտի հաստատ աղբիւր:

Դրանք հետևեալներն են:

Առաջին: Միշտ մաքուր պահել պարտէզը ամեն տեսակ խոտերից, փորելով պարտէզը ամբողջովին և, յատուկ ուրագներով քարհան անել տարին 2—3 անգամ պարտէզում բուսած բոլոր խոտերը, որոնց մէջ ապրում են զանազան միջատներ, ձու են դնում և վնասում ծառերին:

Երկրորդ: Մաքրել, սրբել և խոզանակներով քե-

րել ծառերի կեղեները, քսելով աշնանը՝ բունն ու հաստ ճիւղերը կրի, աղպի լուծոյլթով, իսկ քերած բոլոր մամուռները ժողովել ու այրել:

Երրորդ: Չորացած պտուղները, ծաղիկները, գետին թափւած, փթած, որդնոտած պտուղները ժողովել և այրել:

Չորրորդ: Իր ժամանակին ունենալ բժշկելու բոլոր պարագաները՝ վերմորելի սրակիչ, պղնձի արշասպ, փարիզեան կանաչ, չհանգցրած կիր, մի փոքրիկ կշեռք, մի քանի կիսատակառներ (полубочки), մաղեր, կաւի ամաններ, մկրատներ, չոթքեր, որպէս զի ամեն ինչ իր ժամանակին կատարւի և ոչ թէ ուշանայ, երբ արդէն բանը բանից անցած կը լինի:

Հինգերորդ: Պարաբտայնել ծառերը լաւ աղբով և այն էլ ոչ թէ ուղղակի ծառի տակ թափելով, այլ բնից մի երկու արշին հեռու, ճիւղերի տակ գտնած հողի մէջ, լաւ փորելով ու խառնելով աղբը հողի հետ:

Վեցերորդ: Պահել պարտիզում հաւեր, բաղեր, սագեր, հնդուհաւեր, որոնք մէծ օգուտ են տալիս տիրոջը, ոչնչացնելով զանազան որդեր, ճիծուներ ու դրանց ձւերը. նոյնպէս և խնամել երգող թռչուններին:

Ահա այս վեց պատւէրների մէջ է ամփոփած պրտղատու ծառի խնամքի և պարտիզի եկամուտի գաղտնիքը: Իսկ մանրամասնութիւնները և մօտիկ ծանօթութիւնը տւած են այս գրքի մէջ:

Մեր ընթերցողների գլխաւոր ուշադրութիւնն ենք դարձնում զրքիս տպւած յայտարարութիւնների վրայ, ուր կբգտնեն ցուցմունքներ՝ թէ ուր կարող են դիմել այս կամ այն տնկի, մեքենայ, դեղեր, որպէս և պաղաբուծութեան վերաբերեալ ուսւերէն լեզով օգտաւէտ զրքեր ձեռք բերելու համար:

Յուսով ենք, որ մեր այս հրատարակութիւնը կունենայ Անդրբկովկասի պարտիզպանների և պարտիզատէրերի համար այնքան օգուտ, որքան ընդհանրապէս կարող է տալ մի գործնական ձեռնարկ:

### Վ Ե Ր Զ

## Յ Ա Ն Կ

	Երես
Առաջարան . . . . .	2.
1) Կղման և հող . . . . .	9.
2) Մնկային հիւանդութիւններ (բնի և կեղկի) .	19.
3) Ծառերին վնասող միջատները . . . . .	30.
Պարփեան կանաչ . . . . .	34.
4) Պառագներին և տերևներին վնասող մնկային հիւանդութիւններ. . . . .	56.
Դեղերը և նրանց պատրաստելը . . . . .	66.
Բորդոյեան նեղուկ . . . . .	66.
Նաւքի էմուլսիա . . . . .	68.
Թուրունի էֆորակս . . . . .	69.
5) Կրծող կենդանիներ . . . . .	69.
6) Պաղատու այգու բարեկամները . . . . .	71.
Օդտակար միջատներ . . . . .	72.
Օդտակար կենդանիներ և թռչուններ . .	75.
Վերշաբան . . . . .	76.
Յայտարարութիւններ . . . . .	78.



ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ, ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՅԱՐԻ  
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐՔԵՐ ԵՒ ԶԵԽԱՌԿՆԵՐ

- 1) *Шрейнеръ, Я. М. Главныйя настъ-  
комья, вредящія плодоводству и  
ихъ истребленіе . . . . . — 30 к.*
- 2) *Варлихъ, В. К. Большни плодовыхъ  
девевъевъ. . . . . 1 р. —*
- 3) *Гребницкий, А. С. Уходъ за плодо-  
вымъ садомъ . . . . . 1 р. 50 к.*
- 4) *Кичуновъ, Н. И. Наши плодовые  
деревья. . . . . — 75 к.*
- 5) *Кичуновъ, Н. И. Садоводство для на-  
чинающиихъ . . . . . 1 р. —*
- 6) *Дорофеевъ, П. П. Какъ дешево уст-  
роитъ садъ . . . . . — 40 к.*
- 7) *Клаусенъ, Э. Учебникъ огородни-  
чества и садоводства . . . . . — 30 к.*
- 8) *Пашкевичъ, П. Учебникъ садоводства  
для школьнъ зъ частяхъ I ч. Ого-  
родничество, II ч. Плодоводство, III  
часть Декоративное садоводство  
բոլոր միամին . . . . . 2 р. 75 к.*
- 9) *Гаевский, М. Н. Плодовая школа и  
плодовый садъ . . . . . 1 р. —*
- 10) *Мосевичъ, Плодовод. для начинающихъ — 25 к.*
- 11) *Կ. Մելիք-Շահնազարեան. — Վազի մշ-  
կութիւնը . . . . . 1 լուբ. —*
- 12) *Կ. Մել. Շահնազարեան. — Գինեգործութիւն 1 լու.*

Այս բոլոր գրքերը կարելի է ստանալ «Գիւղատնտես»-ի  
խմբագրութիւնից, նաև հայերէն լեզուով դուրս եկած գիւ-  
ղատնտեսական բոլոր գրքերը:

Ֆիրման զանազան գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդէսներում կովկասսւմ և Ռուսաստանաւմ պարգևատրւած է 15 հատ բրոնզեայ, արծաթեայ և ոսկեայ մեղալներով:

Կ. Թ. Ա. Փ Բ Ի Կ Ե Ա Ն Ի

Այդերուծական տնտեսութիւնը առաջարկում է խնձորենիքի, տանձենիքի, գեղձի, ծիրանենու, կեռասենու, սալորենու և այլ պտուղների 1 և 2 տարեկան ծառեր արտասահմանեան ամենալնտիր տեսակներից, պատւաստած վայրի տունկերի վրայ և թզուկ (կարճահասակ) ծառեր՝ պատւաստած խնձորենիքը գուսենի, պարագիզկայի, իսկ տանձենիքը սերկնիքի և կեռասը՝ մահալէրի վրայ:

Ծառերի ցուցակը ուղարկուում է ձրի:

Դիմել՝ Գօրի Կ. Թ. Ա. Փ Բ Ի Վ Հ Ա Ն Ի Բ Ա Ն Ի Բ Ա Ն Ի  
Հայոց Հանունին և Թիֆլիզում՝ Կավազսկое  
Общество Сельск. Хозяйства, Барятинская ул., որտեղ  
և կայ մեր ծախու ծառերի պահեստը:

---

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական  
Հնկերութեան

---

## Բ Ի Ւ Ր Ո Ն

Առաջարկում է կալւածատէրերին

Ախտահանիչ նիւթեր      |||      Այգեգործակ. գործիքներ  
Արջասպ (կապուտ քար)      |||      Վէրմօրէլի սրսկիչ  
ծծմբափոշի      |||      Էլլէր, Տօրպիլ,  
Պարիզեան կանաչ      |||      Վուքսեր և այլն.  
և այլն:

Ընդունում է յանձնաբարութիւններ բերել տալ երկրագործական-գիւղատնտեսական մեքենաներ, գործիքներ, կաթնատնտեսութեան ամեն տեսակ պարագաներ, ընտիր սերմօրայք՝ հացահատիկների, խոտերի, իւղաբոյսերի և բանջարանոցի:

Տալիս է գիւղատնտեսական ամեն ճիւղերին վերաբերեալ հարցերին բաւարար տեղեկութիւններ և պատասխաններ:

Դիմել՝ Տիֆիս Կավազսկ. Императ. Сельско-Хозяйство Общество, Барятинская ул.

ՀՀ Ազգային գրադարան



NL0079630

ՀՀ Ազգային գրադարան



NL0079631

